25.888

1930

05.06.2013

38515

Հ. Ս. Խ. Հ.

05 JAN 2010

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

## 1929—30 ՏՆՏ. ՏԱՐՈՒՄ

(Նյութեր յեվ թվական տվյալներ)

Հրատարակություն „ՀՕՑԿՈՈՊ-“ի բանսեկցիայի
ԵՐԵՎԱՆ—1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖ
Գլավլիտ. 5108 բ.
Պատվեր 2285. Տիրաժ 2500

Հաստատված ե Բանսեկցիայի նախագահության 1930 թ. 4-ին Մարտի նիստում։

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ *(Թեզիսներ)*

Ընթացիկ տարվա հաշվետու վերընտրական կամպանիան բնորոշում ե մեր սոցիալիստական տնտեսության վճռական հաջողություններով։ Մասնավոր առեվտրականներին շուկայից դուրս վանելը յեվ համատարած կոլեկտիվացման շրջաններում կապիտալիզմի —կուլակության, վորպես դասակարգի վոչնչացումը, սրում ե դասակարգային պայքարը թե գյուղում յեվ թե քաղաքում.

Յերկրի արտադրողական ուժերի զարգացման, մասնավորապես արտադրական ֆինանսական պլանների արագ իրագործումը խոշոր չափերով պայմանավորված են բանվորական պարենավորման կազմակերպելուց յեվ անհրաժեշտ կենսամթերքներն առանց ընդհատումներով մատակարարելու։ Սպառումը հանդիսանալով բանվորական ուժի վերարտադրման հիմնական գործոններից մեկը, հարկադրում ե բանվորական կոոպերացիային ուժեղացնել անմիջական սպառման առարկաների մատակարարումը, դնելով այն նորմալ հունի մեջ։ Մասնավորապես մի շարք անհրա-

մթերքների յեվ արդյունաբերական ապրանքների պակասությունը, պահանջում ե խիստ պլանավորման յենթարկել դեֆիցիտային ապրանքների բաշխումն այն հաշվով, վոր արդյունաբերական յեվ շինարարական վայրերի բանվորները ավելի բարձր նորմաներով ապրանքներ ստանան։ Այսոր աշխատանքի արտադրողականության բարձրացման յեվ ինքնարժեքի իջեցման կարեվորագույն խնդիրները զգալի չափերով հենվում են կոոպերացիայի աշխատանքների վրա։

Այստեղից արդեն բխում են այն հիմնական անելիքները, վորոնք ընկնում են բանվորական կոոպերացիայի վրա։

Հաշվետու վերընտրական կամպանիայի ընթացքում բանկոոպերացիան պետք ե մաքսիմալ չափերով մոբիլիզացիայի յենթարկի բանվորական մասսաների ակտիվությունը յեվ հիմնովին վերադասավորի յուր աշխատանքները հարմարեցնելով այն վերակառուցողական շրջանի պահանջներին։

## ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼԵՆՔ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաքննադատության լոզունգը հանդիսանում ե սոցիալիստական շինարարության առաջխաղացման յեվ մասսաների ստեղծագործական նախաձեռնության հիմնական զենքերից մեկը։ Սակայն բանվորական կոոպերացիան ինքնաքննադատության լոզունգը կյանքում բավարար չափով չի կիրառել։ Կուսակցության գծի խեղաթյուրումը ապրանքամատակարարման սոցիալական սկզբունքների վոչ հետեվողական գործադրումը, ապարատներում դեռ մինչեվ որս վորոշ ան-



հարազատ տարրերի գոյությունը ցույց են տալիս, վոր բանվորական կոոպերացիայում ինքնաքննադատությունը համապատասխան չափերով չի ծավալվել յեվ վորպես մեր աշխատանքներն առողջացնող միջոց, յուր կոնկրետ արտահայտությունները չի գտել։ Ընտրական կամպանիան պետք ե ընթանա պրոլետարական առողջ ինքնաքննադատության լոզունգի տակ։

Հաշվետվությունների ընթացքում պետք ե լայնորեն ոգտագործել բանբրիգադների հետազոտական նյութերը, վորտեղ հայտնաբերված են կոոպերատիվ աշխատանքների մի շարք թերություններն ու բացերը։

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Վարչությունները յեվ վերստուգիչ հանձնաժողովներն իրենց հաշվետվությունների ժամանակ պետք ե վոչ միայն նվաճումների կամ թերությունների վրա կանգ առնեն այլ հաշվետու զեկուցումները պետք ե այնպես դասավորել, վորտեղ հիմնականում պետք ե արտացոլվի դասակարգային գծի, կուսակցության յեվ իշխանության դիրեկտիվների կատարումը յեվ լիազորական ժողովների նակազների կենսագործումը։

Մասսաների ուշադրությունը պետք ե հրավիրել կուսակցության կենտրոնական կոմիտեի նոյեմբերյան պլենումի վորոշումների վրա-այն ե թե բանկոոպերացիան վորքան ե իրականացրել բանվորի ռեալ աշխատավարձի 12 տոկոսային բարձրացումը։ Կամպանիայի ընթացքում մասսաներին պետք ե մասնակից

դարձնել կոոպերատիվ շինարարության հիմնական ձեռնարկումներին։

Պետք ե սովորել թե կոոպերացիան մասնավոր առեվտրականներին ինչ չափով ե դուրս քշել բանվորի բյուջեից, ինչ աշխատանքներ ե կատարել սեփական բանջարաբուծական, կաթնաբուծական յեվ այլ տնտեսություններ կազմակերպելու ուղղությամբ, շինարարական յեվ արդյունաբերական վայրերի բանվորների մատակարարման աշխատանքները ինչպես են ընթացել, ապրանքների ճիշտ դասակարգային բաշխման սկզբունքները իրականում վորքան ե կիրառված կյանքում։

Կամպանիայի ընթացքում պետք ե մասսայական ստուգման յենթարկել բանկոոպերացիայի ռացիոնալիզատորական ձեռնարկումները, պարզելու թե ինչ չափերով ե իրագործված Ցենտրոսոյուզի՝ յեվ Ցերաբսեկցիայի դիրեկտիվները—ռացիոնալիզմումը կյանքում իրագործելու ուղղությամբ։ Միյեվնույն ժամանակ բանվորների այն առաջարկությունները, վորոնք կըբարելավեն կոոպերացիայի հետագա աշխատանքները պետք ե հաշվի առնվեն յեվ կյանքում գործադրվեն։

Մասսայի ուշադրությունը առանձնապես պետք ե սրել դեպի հասարակական սննդի կազմակերպման յեվ բարելավման աշխատանքները։ Մանավորապես բանվորական հանրակացարաններում, խոշոր գործարաններին յեվ ձեռնարկներին կից պետք ե ուժեղացնել հասարակական սննդի ցանցը։

Կամպանիայի կենտրոնական խնդիրներից մեկը պետք ե կայանա սեփական միջոցների յեվ ներքին հնարավորությունների մոբիլիզացիան։



Յերկրի ինդուստրացումը պահանջում ե կոոպերացիայից, վոր նա յուր տնտեսության ֆինանսավորման անհրաժեշտ գումարը վորոնի յուր սեփական միջոցների մեջ։ Մի կողմից պետական վարկերի կրճատումը, իսկ մյուս կողմից կոոպերացիայի հիմնական ներդրումները՝ պահեստները, խոհանոց-գործարաններ, սառցարաններ յեվ խանութներ կառուցելու հարվածային աշխատանքները, կոոպերացիայից պահանջում են մաքսիմալ չափերով ուժեղացնել յուր տնտեսության ֆինանսավորման բազան։

Կամպանիայի ընթացքում Պրոֆմիութենական մարմինների հետ միասին անդամների մեջ լայն բացատրական աշխատանք պետք ե տանել յեվ պարզաբանել փայավճարների դիֆերենցիալ գանձման յեվ ընդհանրապես սեփական միջոցների ուժեղացման անհրաժեշտության խնդիրները, բանվորական յեվ աշխատավորական մասսաներին պետք ե ծանոթացնել մեր ընդհանուր ֆինանսական յեվ վարկային քաղաքականության ու այն խնդիրների հետ, վորոնք առաջադրված են Ցենտրոսոյուզի 3-դ նստաշրջանի կողմից (փայավճարների նորմաների բարձրացումը յեվ մեկ ամսվա աշխատավարձի չափով դիֆփայի նորմայի սահմանումը, ավանդների յեվ կանխույթների ներգրավումը, ընտանիքի 2-դ յեվ 3-դ անդամների կոոպերացումը յեվ այլն)։

## ԱՊԱՐԱՏԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Բանկոոպերացիայի հաշվետու-վերընտրական կամ-

րամասնորեն ստուգել աշխատող ապարատի սոցիալական դրությունը, վորպեսզի մաքրել այն վնասարարներին յեվ սոցիալապես անհարազատ տարրերին, վորոնք կասեցնում են մեր սոցիալիստական շինարարության առաջխաղացման թափը։ Կամպանիայի ընթացքում ակտիվ բանվորներին պետք է առաջ քաշել ղեկավար աշխատանքների։ Կամպանիան պետք է ապահովի բանվորական կոոպերացիայի ապարատի վերակառուցումը, թարմացնի յեվ ուժեղացնի բանվորական կորիզը։

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորական կոոպերացիայի աշխատանքները կանոնավորող հիմնական գործոններից մեկը հանդիսանում է սոցիալիստական մրցակցությունը։ Սակայն սոց. մրցակցությունը յեվ հարվածայնությունը վորպես մեր աշխատանքները վերակառուցող միջոց դեռ կոոպերացիայում համապատասխան տեղ չի գտել յեվ լայնորեն չի գործադրվում բանկոոպերացիայի աշխատանքներում։ Կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է մանրամասնորեն քննության յենթարկել թե ինչ չափով է իրագործված պայմանագրերի այն կետերը, վորոնք կնքված են այս կամ այն կոոպերատիվ կազմակերպության, խանութների ու ճաշարանների մեջ։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել յեվ պարզել թե աշխատող ապարատում ինչպես է գործադրվում հարվածայնությունը։



## ԽՈՐԱՑՆԵՆՔ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Բանվորական կոոպերացիայի կուլտ-կրթական ձեռնարկումների թափը հետ է մնում նրա տնտեսական նվաճումների զարգացման տեմպից։

Մանկապարտեզները, մսուրները, կինոն, ռադիոն, կոոպ-կադրերը, վորակապես յեվ քանակապես չեն բավարարում բանվորական մասսաների որըստ-որե աճող կուլտ-կենցաղային պահանջներին։ Կամպանիայի ընթացքում պետք է առանձնապես կանգ առնել կուլտ-կենցաղային աշխատանքների անհրաժեշտության խորացման և կադրերի պատրաստման հարցերի վրա։ Պետք է ընդգծել, վոր առանց կուլտ-կենցաղային աշխատանքների ծավալման, դժվար է իրականացնել այն խնդիրները, վորոնք մեր յերկրի սոցիալիստական շինարարության շրջանում ընկած են բանվորական կոոպերացիայի վրա։

Այս կամ այն բանվորական կոոպերացիայի գործունեությունը պետք է չափել նրա կատարած կուլտ-կենցաղային աշխատանքներով։

Կամպանիայի աշխատանքների հիմնական հարցերից մեկն էլ դա պրոֆմիության անդամների, գըլխովին կոոպերացման խնդիրն է։ Պետք է անբավարար համարել բանվորների, տնայնագործների, ծառայողների յեվ կոոպերատիվ ակտիվի մեջ տարած աշխատանքները։ Բանկոոպերացիան դեռ մինչեվ այժմս յուր աշխատանքների շուրջը չի ստեղծել համապատասխան հասարակայնություն։ Կամպանիայի ընթացքում պետք է լայնորեն ոգտագործել խանութների յեվ

ճաշարանների վարիչների ընտրությունը։ Պետք է կոոպերացիան մոտեցնել մասսաներին յեվ նրանց անմիջականորեն մասնակից դարձնել կոոպերատիվ շինարարության աշխատանքներին։

## ԿԱՆԱՆՑ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ

Կամպանիայի ընթացքում պետք է մոբիլիզացիայի յենթարկել կանանց յեվ յերիտասարդության ակտիվությունը յեվ նրանց իբրեվ մասնակից դարձնել հաշվետու-վերընտրական կամպանիայի աշխատանքներին։ Անպայմանորեն պետք է իրագործել կուսակցության կենտրոնական կոմիտեի հուլիսյան պլենումի ու Ցենտրսոյուզի համապատասխան վորոշումները յեվ կոոպերատիվ ղեկավար աշխատանքներում վճռական կերպով առաջ քաշել կանանց յեվ յերիտասարդությանը։ Խոշոր բանվորական կոոպերատիվների մեջ պետք է մշտապես աշխատի վարչության մեկ կին անդամ։

Ընթացիկ տարվա ընտրություններին խանութային հանձնաժողովների յեվ լիազորների կազմի մեջ կանանց տեսակարար կշիռը պետք է հասցնել 30—40 տոկոսի յեվ համապատասխան տեղ տալ յերիտասարդ կենսունակ ուժերին։ Վորպես կազմակերպչական կարեվոր ձեռնարկում հաշվետու կամպանիայի շրջանում պետք է անցկացնել հատուկ խորհրդակցություններ՝ մասնակցությամբ կին պատգամավորուհիների յեվ կին փայատերերի։



## ԿԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ

Գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին իրապես օժանդակելու համար, անհրաժեշտ է, վոր բանկոոպերացիայի ակտիվը առանձին մասնակցություն հայտնաբերի գյուղական կոոպերացիայի հաշվետու-վերընտրական կամպանիայի աշխատանքներում.

Ընթացիկ տարում բանկոոպերացիայի ակտիվի մասնակցությունը գյուղի ընտրական կամպանիայում ստանում է առանձին նշանակություն, մանավանդ համատարած կոլլեկտիվացման շրջաններում։

Գյուղ մեկնող բրիգադաները պետք է կազմված լինեն արտադրության մեջ աշխատող կոոպերատիվ ակտիվի լավագույն բանվորներից։

Գյուղ մեկնող բրիգադաներին անհրաժեշտ է մանրամասն ցուցմունքներ տալ, ծանոթացնել գյուղում տարվելիք հիմնական աշխատանքների (չքավորների կոոպերացում, օժանդակել չքավորների խմբակների կազմակերպմանը, գիֆ-փայերի գանձումը) յեվ այլն խնդիրների, վորոնք անմիջականորեն կապված են գյուղատնտեսության յեվ բանկոոպերացիայի աշխատանքների հետ (գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիա, գյուղատնտեսական շուկայի ընդգրկում յեվ այլն)։

## ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հաշվետու-վերընտրական կամպանիայի աշխատանքները ղեկավարելու համար պետք է ընտրել կեն-

տրոնական ընտրական հանձնաժողով։ Կամպանիայի ամբողջ աշխատանքները վարելու պետք է համաձայնեցնել տեղի կուսակցական ցեվ պրոֆեսիոնալ կազմակերպությունների հետ։ Անհրաժեշտ է նախապես կազմել հաշվետվության ցեվ ընտրության արացույցային պլանը։ Կամպանիայի հաշվետվությունները այնպես պետք է դասավորել, որ վարչությունների, լիազորների ցեվ խանութային հանձնաժողովների զեկուցումներին պրոֆմիության անդամները 100 տոկոսով մասնակցեն։ Հաշվետվությունների ժամանակ պետք է ապահովել չերխտասարդ ակտիվների մասնակցությունը։ Մասնավորապես պիոներական կազմակերպությունների միջոցով ցեխերում ցեվ կոլլեկտիվներում պետք է տարածել հաշվետվությունների թերթիկներ, որտեղ պետք է գրված լինի հաշվետվության ժամկետը, որակարգը ցեվ ժողովի տեղը։

Հաշվետու ժողովների ժամանակ անպայմանորեն պետք է նկատի ունենալ այն ձեռնարկ հիմնարկները, որոնք անցել են անընդհատ շաբաթի ցեվ սմենային աշխատանքների, որպեսզի արտադրության մեջ աշխատող բոլոր բանվորները հնարավորություն ունենան ակտիվ մասնակցելու հաշվետու զեկուցումներին։ Վարչությունները պետք է համաձայնություն գալ ակումբների վարչությունների հետ, որպեսզի կինոն, ռադիոն ցեվ այլ կուլտուրական միջոցները օգտագործվեն աշխատանքների համար։

Մամուլի միջոցով պետք է լայնորեն պարզաբանել բանկոոպերացիայի հաշվետու վերընտրական կամպանիայի հիմնական խնդիրները։

Պատի լրագրի մեջ պետք է առանձին տեղ հատ-



կացնել ցեվ լուսաբանել այս կամ այն լիազորի ցեվ խանութային հանձնաժողովի աշխատանքները, մերկացնելով նրանց բացերը ցեվ թերությունները, ցույց տալով այն կոնկրետ միջոցները, որոնցով հնարավոր կլինի առողջացնել տվյալ առևտրական կամ արտադրական կետի աշխատանքները։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել այն առաջադրություններին, որոնք արվում են ցեխերում ցեվ կոլլեկտիվներում։ Պետք է հատուկ ակտիվների միջոցով մանրամասնորեն հաշվառման ցենթարկել ցեխի ցեվ կոլլեկտիվների կողմից արած առաջադրությունները, ամփոփել ցեվ լիազորական ժողովի նակայի նախագիծ ընդունել։ Լիազորական ժողովի կողմից հաստատվելուց հետո նակազը վարչության ցեվ վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքների հիմքը պետք է հանդիսանա։

Հայկոոպի Ինսպեկցիայի Նախագահ

(Պ. ՄԿՐՏՉՅԱՆ)

Կոնսուլտանտ

(Ս. ՔԱԼՕՃՅԱՆ)

ՃԻՇՏ Է

Հկ. (9 օր.)

**Բանկոոպերացիայի 1928—29 տնտեսական տարվա հաշվետու կամպանիայի լիազորների ընտրական նորման ըստ բանկոոպների.**

| Բանկոոպների անունները | Քանի բանվոր անդամից մեկ լիազոր է ընտրվելու | Քանի ծառայող և այլ անդամից մեկ լիազոր է ընտրվելու |
|---|---|---|
| 1. Յերևանի . . . . . . . | 100 | 200 |
| 2. Լենինականի . . . . . . | 75 | 150 |
| 3. Ալլահվերդիի . . . . . | 25 | 50 |
| 4. Ղափան . . . . . . . | 25 | 50 |
| 5. Շամլուղ . . . . . . . | | |
| 9. Զորագեղ . . . . . . . | 15 | 30 |
| 7. Սարդարապատ . . . . . | 15 | 30 |
| 8. Անիի . . . . . . . . | | |
| 9. Ղուերի . . . . . . . . | | |

**Բանկոոպերացիայի 1929—30 ս. լիազորական ժողովների ուրակարգի հարցերը.**

1. Հայկոոպի զեկուցումը։
2. Բանկոոպի հաշվետու զեկուցումը յուր 28—28 ս. տ. գործունեության մասին։
3. Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումը
4. Բանկոոպի 28—29 ս. տ. հաշվետվության հաստատումը և օգուտների բաշխումը։
5. 1929—30 տ. տ. առ-ֆին պլանի և նախահաշվի հաստատումը.



6. Ընտրությունները (վարչության և վերստուգիչ հանձնաժողովի)։
8. Ընթացիկ հարցեր։

**Բանկոոպերացիայի 1929—30 ս. ս. հաշվետու-վերընտրական կամպանիայի ուղեցուցային պլանը.**

| ԲԱՆԿՈՈՊՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վարչության, վերստուգիչ, խանութային և ճաշարանային հանձնաժողովների։ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Լիազորական, խանութային յեվ ճաշար. հանձնաժողովների։ | Լիազորական ժողովների հրավիրման ժամկետները։ |
|---|---|---|
| 1. Յերեվանի . . . . . | 1\|IV—1\|V | մայիսի 3-ին |
| 2. Լենինականի . . . . . | 1\|IV—1\|V | մայիսի 6-ին |
| 3. Ալլահվերդի . . . . . | 25\|III—20\|IV | ապրիլի 28-ին |
| 4. Զորագեղ . . . . . . | 25\|III—18\|IV | —»— 21-ին |
| 5. Շամլուղ . . . . . . | 25\|III—15\|IV | —»— 25-ին |
| 6. Անիի . . . . . . . | 25\|III—15\|IV | —»— 18-ին |
| 7, Սարդարապատ . . . . | 25\|III—10\|IV | —»— 13-ին |
| 8. Ղափանի . . . . . . | 30\|III—30\|IV | մայիսի 10-ին |
| 9. Ղաերի . . . . . . . | 31\|III—10\|IV | ապրիլի 10-ին |

## ԲՈԼՈՐ ԲԱՆԿՈՈՊՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏՃԵՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

*Համաձայն Ցերաբսեկցիայի նախագահության ս. թ. հունվարի 28-ի վորոշման և կառավարության դիրեկտիվի բանվորական կոոպերացյան զուտ ոգուտների 35 տոկոսը հատկացնելու յե յերկարատեվ վարկավորման ֆոնդին. Յելնելով վերոհիշյալից առաջարկում ենք 1928-29 տ. տարվա զուտ ոգուտը բաշխելիս ղեկավարվել հետևյալ հատկացումներով:*

| | | |
|---|---|---|
| 1. | *Հիմնական դրամագլխին* . . . . . | 20 տոկ. |
| 2. | *Յերկարատեվ վարկավորման ֆոնդին* | 35 ,, |
| 3. | *Պահեստի դրամագլխին* . . . . . | 10 ,, |
| 4. | *Բանվորների և ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդին* . . . . . | 10 ,, |
| 5. | *Կուլտ-կենցաղային ֆոնդին* . . . . | 25 ,, |
| | *Ընդամենը* . . . | 100 տոկ. |

*Զուտ ոգուտից նախորոք պետք և դուրս գալ 20 տոկոս վորպես յեկամտային հարկ, վորից հետո մնացած գումարը յենթակա յե բաշխման ըստ վերևվում ցույց տված հատկացումների:*

*Այն բանկոոպները, վորոնք 1928-29 տ. տարում իրենց գործունեության ընթացքում վնաս են ունեցել, այդպիսին համաձայն կանոնադրության պետք և դուրս գրել (լիագորական ժողովի վորոշումից հետո) պահեստի դրամագլխից, հիմնական դրամագլխից և վերջում փայադրամագլխից:*

*Ոգուտների բաշխման վերջնական ձևակերպումը կատարելու յե վերընտրական կամպանիայի ժամանակ լիագորական ժողովի կողմից:*

**Հայկոոպի բանսեկցիայի նախագահ՝**

**(Գ. ՄԿՐՏՉՅԱՆ)**

**Կոնսուլտանտ՝**

**(ՔՈԼՈՇՅԱՆ)**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ 1927-28 ՅԵՎ 1928-29 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Վերջին տարիների ընթացքում յերկրի ապրանքաշրջանառության մեջ բանվորական կոոպերացիան խոշոր տեղ և գրավում: Մեր արդյունաբերության, շինարարության և ինդուստրիալ վայրերի արագ զարգացումը, խոշոր քանակությամբ ավելացրել և աշխատող բանվորների թիվը, վորի հետևանքով ել մեկ յերկու տարվա ընթացքում աննախընթաց թափով աճել են բանվորական կոոպերացիայի առևտրական կետերը և հասարակական սննդի ցանցը, շրջանառությունը, անդամների թիվը և նոր բանվորական կոոպերատիվ միավորները: Յերկու տարվա ընթացքում Անիում, Զորագետում, Ղափանում և Սարդարաբադում կազմակերպվել են բանվորական կոոպերատիվների նոր միավորներ: Մասնավոր առևտրականներին շուկայից վռնդելու, բանվորի բյուջեյի ընդգրկման, փայադրամագլխի ավելացման, կուլտուր-կենցաղային ձեռնարկումների ուղղությամբ բանվորական կոոպերացիան ունի մի շարք վճռական հաջողություններ: Կազմակերպչական-ֆինանսական աշխատանքների բնագավառում Լենինականի բանկոոպը համեմատաբար ավելի մեծ նվաճումներ ունի քան մնացած բանկոոպները: Մեկ տարվա ընթացքում Լենինականում բան-*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ 1927/28 ԵՎ 1928/29 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| № № | ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | ԵՐԵՎԱՆ | | | ԼԵՆԻՆԱԿԱՆ | | | ԱԼԼԱՀՎԵՐԴԻ | | | Ղ Ա Փ Ա Ն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով |
| 1 | Անդամների թիվը | 10452 | 17618 | 68,2 | 4821 | 7646 | 58,6 | 1164 | 1382 | 19,0 | 1451 | 1800 | 17,1 |
| 2 | Փայագրամագլուխ | 111265 | 208000 | 87,0 | 40795 | 92249 | 126,1 | 13338 | 18089 | 35,7 | 11374 | 18065 | 67,6 |
| 3 | Միջին փայ | 10,63 | 11,80 | — | 8.46 | 12,06 | — | 11,45 | 13,09 | — | 7,84 | 10,04 | — |
| 4 | Պրոֆմիութ. անդամների կոոպ.% | 57,9 | 72,0 | — | 43,2 | 76,0 | — | 58,4 | 63,3 | — | 70,5 | 79,0 | — |
| 5 | Կանանց կոոպ. %-ը | 15,4 | 20,0 | 30,0 | — | — | — | — | 4 | — | — | 3,5 | — |
| 6 | Առևտր. կետերի թիվը | 35 | 58 | 66,0 | 28 | 56 | 100,0 | 9 | 16 | 22,2 | 5 | 12 | 140,0 |
| 7 | Ձեռնարկների թիվը (ճաշ. հետ) | 8 | 11 | 37,5 | 4 | 7 | 75,0 | 3 | 4 | 33,3 | 5 | 7 | 40,0 |
| 8 | Շրջանառություն | 6865000 | 10426000 | 52,0 | 3240200 | 4589100 | 41,6 | 575300 | 945000 | 64,3 | 403100 | 687400 | 68,0 |
| | ա) արդյունաբ. ապրանքներ | 4828000 | 6657600 | 38,0 | 2223500 | 3099400 | 39,3 | 253800 | 515000 | 102,9 | 245800 | 404800 | 64,7 |
| | բ) գյուղատնտեսական | 1585400 | 3092400 | 96,5 | 825300 | 1221200 | 47,9 | 221500 | 309200 | 39,6 | 119800 | 218100 | 82,1 |
| | գ) հասարակական սնունդ | 451000 | 676000 | 50,0 | 191400 | 268500 | 40,3 | — | 120800 | — | 37500 | 64500 | 72,0 |
| 9 | Փոխառու միջոցներ | 1691700 | 2348000 | 39,0 | 589811 | 669956 | 13,7 | 98163 | 145134 | 58,0 | 80308 | 143144 | 78,2 |
| 10 | Սեփական միջոցներ շրջանառության մեջ | — | — | — | 59168 | 22254 | - 62,4 | 18331 | 11167 | - 39,1 | 18975 | 14478 | - 26,9 |
| 11 | Օգուտ | 6900 | 6800 | - 1,5 | 28642 | 32443 | - 37,1 | 24968 | 6870 | - 72 | 5501 | — | — |

| № № | ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | ՇԱՄԼՈՒՂ | | | Ա Ն Ի | | | ԶՈՐԱԳԵՍ | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առ 1/x 25 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 82 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով | Առ 1/x 28 թ. | Առ 1/x 29 թ. | Աճը %-ով |
| 1 | Անդամների թիվը | 430 | 447 | 3,9 | 425 | 385 | - 9,5 | — | 598 | — | 18743 | 29876 | 59,4 |
| 2 | Փայագրամագլուխ | 5321 | 5877 | 10,5 | 2067 | 3436 | 66,2 | — | 5527 | — | 184155 | 351243 | 90,7 |
| 3 | Միջին փայ | 12,37 | 13,14 | — | 4,63 | 8,93 | — | — | 9,24 | — | 9,88 | 11,76 | — |
| 4 | Պրոֆմիութ. անդամների կոոպ.% | 60,1 | 75,0 | — | 63,0 | 70,0 | — | — | 32,0 | — | 51 | 68 | — |
| 5 | Կանանց կոոպ. %-ը | — | 5 | — | — | — | — | — | 2 | — | — | — | — |
| 6 | Առևտր. կետերի թիվը | 1 | 4 | 300,0 | 2 | 4 | 100,0 | — | 6 | — | 80 | 156 | 95,0 |
| 7 | Ձեռնարկների թիվը (ճաշ. հետ) | 1 | 2 | 100,0 | 2 | 2 | — | — | 4 | — | 23 | 37 | 60,9 |
| 8 | Շրջանառություն | 197100 | 180000 | - 8,6 | 104100 | 169200 | 62,6 | — | 337600 | — | 11385200 | 17334300 | 52,0 |
| | ա) արդյունաբ. ապրանքներ | 118700 | 79500 | - 33,1 | 97200 | 134100 | 38,1 | — | 244300 | — | 7767000 | 11134700 | 44,0 |
| | բ) գյուղատնտեսական | 78400 | 82300 | 4,9 | 6900 | 16100 | 118,8 | — | 35400 | — | 2837300 | 4974700 | 75,3 |
| | գ) հասարակական սնունդ | — | 8200 | — | — | 19100 | — | — | 57900 | — | 679900 | 1214900 | 78,7 |
| 9 | Փոխառու միջոցներ | 33947 | 50593 | 49,0 | 31234 | 27789 | - 7,5 | — | 60457 | — | 2225163 | 3445073 | 54,8 |
| 10 | Սեփական միջոցներ շրջանառության մեջ | 6337 | 4091 | - 35,5 | — | 3075 | — | — | 6152 | — | 102771 | 61217 | - 40,0 |
| 11 | Օգուտ | 5394 | 1557 | - 71,2 | — | 4046 | — | — | 1246 | — | 66405 | 52862 | - 20,4 |

կոոպի փայադրամագլուխն ավելացել է՝ 126 տոկ. հասարակական սննդի ձեռնարկների թիվը՝ 75 տոկ., և այլն: Գյուղատնտեսական մթերքների շուկայի ընդգրկման և հասարակական սննդի շրջանառության ավելացման ուղղությամբ Յերևանի, Ալլավերդի և Ղափանի բանկոոպները նույնպես ունին շոշափելի հաջողություններ:

Չնայած այն հանգամանքին. որ բանվորական կոոպերացիայի փայադրամագլուխը մեկ տարվա ընթացքում ավելացել է՝ 90,7 տոկ. բայց այնուամենայնիվ ներքին միջոցների մոբիլիզացիայի՝ փայակուտակման թափը հետ է մնում այն պահանջներից, վորն առաջադրում մեր ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը:

Մեկ տարվա ընթացքում Հայաստանի բանվորական կոոպերացիայի միջին փայն ավելացել է ընդամենը յերկու ռ., վորը պետք է միանգամայն անբավարար համարել: Այն ժամանակ, յերբ մեր վարկերի խոշորագույն մասը հատկացվում են ծանր արդյունաբերության և շինարարության հարվածային աշխատանքներին, բանվորական կոոպերացիայի փոխառուպետական միջոցները մեկ տարվա ընթացքում ավելանում են՝ 54,8 տոկ., իսկ սեփական շրջանառու միջոցները ընդհակառակը պակասում են՝ 40 տոկոսով: Ղափանի բանվորական կոպերատիվը 1928 - 29 թ. տարում յուր գործունեյությունը վնասով է փակել, իսկ մի քանի բանկոոպներ անցյալ տարվա համեմատությամբ բացարձակ թվերով պակասեցրել են իրենց ոգուտների չափը (Ալավերդի, Շամլուղ, իսկ Յերևանկոոպը վոչ միայն պակասեցրել է յուր նորմալ կուտակ-



ման չափը, այլ նրա սեփական միջոցները չեն մասնակցում շրջանառության մեջ և գտնվում են անշարժ դրության մեջ

Այստեղ կանգ չենք առնում այն մի շարք պատճառների վրա, վորոնք բացասական ազդեցություն են ունեցել բանկոոպերացիայի տնտեսական և ֆինանսական աշխատանքների արդյունքների վրա, բայց պետք է ընդգծել, վոր մի շարք բանվորական կոոպերատիվների միավորներ իրենց աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ճկունություն չեն հայտաբերել, համապատասխան չափերով մոբիլիզացիայի չեն յենթարկել իրենց ներքին հնարավորությունները և բանվորական պարենավորման հարվածային խնդիրների շուրջը անբավարար հասարակայնություն են ստեղծել: Պրոֆմիության անդամների կոոպերացումը 1928—29 թ. տարում ընթացել է անբավարար: Բանկոոպերացիան դեռ այդ ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներ չի տարել և պրոֆմիության անդամների ներգրավման գործում անհրաժեշտ նախաձեռնություն չի հայտաբերել: Մեկ տարվա ընթացքում պրոֆմիության անդամների կոոպերացումը 54 տոկոսից բարձրացել է՝ 68 տոկոսի, վորը նույնպես թույլ է ընթացել. Մի շարք բանվորական կոոպերատիվներ մինչև որս դեռ թերագնահատում և անտարբերության են մատնում կանանց մեջ տարվելիք աշխատանքների անհրաժեշտությունը: Չհերքելով այն մի շարք նվաճումները, մենք բանկոոպերացիայից պահանջում ենք վճռական բեկում մտցնել յուր աշխատանքների մեջ, յուր ձեռնարկների շուրջն ստեղծել լայն բանվորական հասարակայնություն, ուժեղացնելով մասսան-

րի հսկողությունը և մասնակցությունը կոոպերատիվ շինարարության բոլոր բնագավառներում։

## ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԱԳԻՐԸ

1928—29 տնտ. տարին սպառ. կոոպերացիայի նույնպես և Երևանի Բանկոոպի համար յեղել է **տնտեսական վերելքի մի տարի**։ Մասնավոր առևտրի ճակատագրական քայքայման, քաղաքի աշխատավորության (արհմիութենական, տնայնագործական մասսաների) կոոպերացման թափի աճման պայմաններում է ընթացել Բանկոոպի մի տարվա գործունեությունը։ Շրջանառությունների աճումը, խանութային և արտադրական ձեռնարկների ցանցի լայնացումը, փայակուտակումը, կուլտուր կենցաղային և մասսայական աշխատանքների ուժեղ տեմպերը — այդ բոլորը բնորոշում են հաշվետու տարվա աշխատանքների դրական ցուցանիշներով. սակայն դրան զուգահեռ Երևանի Բանկոոպը ունեցել է աննախնթաց դժվարությունների մի շարք։

Հիմնական դժվարությունը — **վորոշ արդյունաբերական ապրանքների** պակասն է (դեֆիցիտային լինելը), վորպիսի հանգամանքը պահանջել է ապրանքաբաշխման տեխնիկական նորմաներ մշակել և դժվարացրել է առևտրական աշխատանքը։ Մյուս դժվարությունը ֆինանսական դժվարություններն են, վորոնք հետևանք են մի կողմից բանկային վարկերի կրճատման, պետարդյունաբերական վաճառքի պայմանների վատթարման և միուս կողմից փայակուտակման վոչ բավարար ընթացքին։



Անհրաժեշտ է շեշտել, վոր մեր շինարարության ուժեղ տեմպին զուգահեռ սպառկոոպերացիան, վորպես հասարակական սպասարկման կազմակերպություն, անխուսափելիորեն պիտի հարմարեցներ իր աշխատանքը թե ընդգրկելու շուկայի գնողունակության մաքսիմումը՝ բանվոր ծառայողների բյուջեյի ավելի բարձր տոկոսն առնելու իր շրջանառության մեջ և թե փռելով իր առևտրական աշխատանքի շոշափուկները քաղաքի բոլոր մասերում, շինարարական շրջաններում, բանվորաշատ ծայրերում և քաղաքամասերում։ Այդ յերկու աշխատանքը Երևանի բանկոոպը կենսագործել է հաջողությամբ, թեև դրա հետ կապված են յեղել շատ մեծ դժվարություններ. (հարմար շենքերի պակասություն, նորոգումների և այլ ծախքերի բարձր տոկոսները), վորոնք պիտի բանկոոպի ֆինանսական դրությունն էլ ավելի դժվարացնեյին։

Ահա այդ պայմաններում է ընթացել Բանկոոպի աշխատանքները 1928—29 տնտ. տարում, վորի համառոտ տվյալներն այստեղ բերում ենք։

## ԲԱՆԿՈՈՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

**Կոոպերացումը.**

Հաշվետու տարվա ընթացքում Բանկոոպը անդամների թիվը բարձրացրել է 10 460-ից մինչև 17.918-ի։ (Պլանով յենթադրվում եր 1929-ի հոկտեմբերի 1-ին ունենալ 17.500 անդամ։) Այս նշանակում է Բանկոոպը գերազանցել է իր պլանը և մի տարում

անդամների թիվն ավելացրել է նախորդ տարվա համեմատությամբ 68,2 տոկոսով։ Կոոպերացման այդ թափը բավարար պիտի համարել մանավանդ չիթե ի նկատի առնենք, որ պրոֆմիության անդամների կոոպերացման տոկոսը մի տարում բարձրացել է 57,8-տոկոսից մինչև 72 տոկոս, իսկ կանանց կոոպերացման տոկոսը 15,4-տոկոսից մինչև 20-տոկոսի։

**Փայակուտակումը**

1928 թվի հոկտեմբերի 1-ի հաշվեկշռով Բանկոոպի փայագրամագլուխը հավասար է 111.264 ռ. 55 կոպեկի. 1929—30 տնտ. տարվա սկզբին այդ գրամագլուխը հասնում է 202.880 ռ. 49 կոպեկի։ Մի տարվա ընթացքում միջին փայավճարը բարձրացել է 10 ռ. 63 կոպ-ից մինչև 11 ռ. 51 կոպեկ։

Ըստ 1928—29 պլանի նախատեսնվում էր փայագրամագլուխը հասցնել 227.000 ռ. և միջին փայը 13 ռուբլու։ Այսպիսով փայակուտակման ասպարեզում Բանկոոպը թերի չէ կատարել իր պլանը։ Այդ փաստը, որ շատ բացասաբար է արտահայտվել Բանկոոպի ֆինանսական գործունեության վրա, բացատրվում է դիֆերենցիալ փայավճարի շուրջը հասարակական-մասսայական աշխատանքների թույլ կազմակերպմամբ։

1929—30 տնտ. տարում Բանկոոպի վարչությունը վոչ միայն պիտի կատարի ծրագրված փայակուտակումը, այլ և լրացնի 1928—29-ի պլանի թերակատարումը։



# ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկոոպը մասսայական աշխատանքների բնագավառում ունեցել է վորոշ նվաճումներ։ Հասարակական ինքնագործունեությունը, համեմատաբար ակտիվորեն քան ուրիշ տարիներում հայտնաբերվել է Բանկոոպի լիազորների ու խանութային հանձնաժողովների կողմից։ Անդամագրության ու փայագրամագլխի գանձման կատարված աշխատանքի մեծ մասը հետևանք պետք է համարել նրանց հասարակական ակտիվության։ Շատացել է այն խանութային հանձնաժողովների թիվը, վորոնք հետաքրքրվում են խանութների աշխատանքների ներքին մանրամասնություններով՝ սանիտարական դրությամբ, սորտավորումով, գներով և այլն. բացի այդ, լիազորական ժողովի անդամներից կազմակերպված սեկցիաները՝ կազմակերպչական, առևտրական-արտադրական,—ավելի մոտ են կանգնած յեղել վարչության առօրյա աշխատանքներին և ավելի յեն մասնակից յեղել նրա գործնական աշխատանքներին։ Յեվ այս տարվա փորձը՝ սեկցիաներին մոտեցնել վարչության աշխատանքներին, պետք է խոստովանել վորոշ դրական արդյունքներ է տվել։ Հետագայում անհրաժեշտ է ավելի խորացնել սեկցիաների վրա հիմնված աշխատանքի մեթոդը, քանի վոր վերջինս տալիս է գործնական հետևանքներ։

Հաշվետու տարվա նվաճումներից մեկն էլ պետք է համարել խոշոր հիմնարկ—ձեռնարկներում կազմակերպված կոոպերատիվ—հանձնաժողովները։ Վերջին-

ների տարել են Բանկոոպի կուլտուր-կրթական հասարակական և դաստիարակչական աշխատանքները մասսայի և կոոպերատիվ խմբակների մեջ և վերջինիս կապել են Բանկոոպի հետ: Այդ հանձնաժողովների միջոցով է, որ տարվել է դեֆերենցիալ փայավճարին անցնելու մասսայական զեկուցումներն ու զրույցները: Անհրաժեշտ է կոոպերատիվ հանձնաժողովների ղեկավարությունն էլ ավելի ուժեղացնել՝ նրանց գործնական նշանակությունը Բանկոոպի աշխատանքների մեջ էլ ավելի բարձրացնելով:

Թվական ավյալներով Բանկոոպի մասսայական աշխատանքների գլխավոր ձևերը հետևյալ պատկերն ունեն 1928—29 թվի համար:

Կոոպերատիվ խմբակներ . . . . 12
Կոոպերատիվ անկյուններ . . . 7
Կոոպխմբակների մասնակցողների թիվը 360 հոգի.
այս թվում կանանց » 150 »
(վորոնցից 120-ը պատգամավորուհի)
Անցկացրած զեկուցումների և զրույցների թիվը—425
» Հարց ու պատասխանի յերեկոներ 39
» Կինո նկարներ 11

Բանկոոպի կենցաղային նշանակություն ունեցող ձեռնարկումները և կուլտ-կրթական աշխատանքերի համառոտ ցանկը հետևյալն է:

Մանկական Հրապարակ 1. } 5 խմբակներով.
» պարտեզ 1.
Մոր և մանկան խանութ 1.
Մսուր (8 մահճակալով) 1.

Նոր կադրերի պատրաստման ու վերապատրաստ-



ման են ծառայում Բանկոոպի կոմսոմոլի խանութը, կին աշխատավորների հատուկ խանութը և դպրոց խանութը: Բանկոոպի կազմ-բաժնի նախաձեռնությամբ անց են կացված ա) գործակատարների վերապատրաստման դասընթացները (35 հոգու համար). բ) Կոոպերատիվ ակտիվի դասընթացքներ.-(40 հոգու համար): Բացի այդ Բանկոոպը պահում է թոշակառուներ թե կոոպերատիվ տեխնիկումում (13 հոգի), Հայկոոպի դասընթացներում (5 հոգի) Մոսկվայում (1 հոգ) և Կազմշինի դասընթացներում (9 հոգի):

Ընդհանուր առմամբ Բանկոոպի 1928 29-ի կազմակերպչական գործունեությունն ընթացել է մասսայական ինքնագործունեության աճման, հասարակայնության ակտիվացման, նոր ձևերի կիրառման և կուլտ-կրթական աշխատանքի ծավալման պայմաններում: Դեռ այդ աշխատանքներն էլ ավելի պիտի խորացնել և նրանց վորակը բարձրացնել:

Հասարակական ինքնագործունեության մարմինները (Կոոպերատիվ ակտիվը) 1927—28-ի համեմատությամբ 1928—29 տնտ. տարին տալիս է այդ մարմինների կազմի հետևյալ աճումը:

| | 2927—28 | 1928—29 |
|---|---|---|
| Խանութային հանձնաժողովներում | 79 հոգի | 163 |
| Լիազորներ . . . . . . . . . | 213 » | 293 |
| Վորոնցից սեկցիաներում աշխատել են | 128 » | 164 |

Բանկոոպի Վարչության առաջ հերթական խնդիր է դրված վերապատրաստման միջոցով ավելի մո-

տեսնել բանկոոպի գործնական աշխատանքներին և հետագայում աշխատանքները տանել պլանային հիմունքներով՝ մի բան, որ մինչև այժմ յեղել է թույլ։

## ԲԱՆԿՈՈՊԻ ԱՌԵՎՏՐԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

### Բանկոոպի խանութների յեվ ձեռնարկների ցանցը

Հաշվետու տարում Բանկոոպի առևտրական ձեռնարկները 1927—28 տնտ. տարվա հետ համեմատության դնելով մենք ունենք հետևյալ թվերը։

| | 1927—28 թն Հոկտեմբերի 1-ին | 1928—29-ին |
|---|---|---|
| Առևտրական կետեր | 35 | 5[illegible] |
| Ցերշիկանոց | 1 | 1 |
| Փ ո ւ ռ | 2 | 2 |
| Հրուշակարան | 1 | 2 |
| Ճաշարաններ | 3 | 4 |
| Թեյարաններ | 1 | 2 |
| Վարսավիրանոց | 1 | 1 |
| Հիմնարկային բուֆետներ | — | 17 |
| Ընդամենը | 44 | 87 |



Ստորև բերում ենք այդ սպասարկման ցանցի առևտրական գործունեյության համառոտ պատկերը։

#### ա. Առևտրական գործունեյությունը

**Ապրանքների գնումն ու վաճառքը հաշվետու տարում.**—Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս թե Բանկոոպը ինչպիսի պլանային յենթադրություններ ուներ վաճառքի ու գնման մասին և ինչպես է այդ պլանը կատարել։

| Գնումները (ինքնարժեքով) | | | Վաճառքը (ծախու գներով) | | |
|---|---|---|---|---|---|
| Ըստ պլանի | Կատարված է | Կատարման տոկոսը | Ըստ պլանի | Կատարված է | Կատարման տոկոսը |
| 8.569.450 | 8.903.146 | 104 | 9.500.060 | 9.874.067 | 103 |

Այսպիսով Բանկոոպը կատարել է գնման ու վաճառքի պլանը գերազանցումով։ Հետաքրքիր է թե պլանի այդ իրագործումը ինչպես է կատարվել գյուղատնտեսական մթերքների ու արդյունաբերական ապրանքային խմբերի վերաբերմամբ առանձին-առանձին վերցրած։

| ԱՊՐԱՆՔՆԵՐ | Գնումները (ինքնարժեքով) | | | Վաճառքը (ծախսը գնով) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ պլանի | Կատարված է | Տոկոսը | Ըստ պլանի | Կատարված է | Տոկոսը |
| Գյուղատնտեսական | 1.823.900 | 1.290.142 | 70,7 | 1.971.300 | 1.402.536 | 71.14 |
| Արդյունաբերական | 6.745.550 | 7.613.004 | 113.1 | 7.528.700 | 8.472.531 | 112.5 |

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ Բանկոոպի առևտրական գործունեության մեջ արդյունաբերական



ապրանքների գնման ու վաճառքի պլանը գերակատարվել է. ընդհանուր գյուղատնտեսական մթերքների գնման ու վաճառքի պլանը կատարված է թերի։ Մանրամասնելով գյուղ մթերքները անվանական, ցուցակին այդ թերակատարումը մենք տեսնում ենք հետևյալ ապրանքների վերաբերմամբ.—կրուպա, բրինձ—(կատարված է պլանի 656 տոկոսը) յուղ այլ կաթնամթերքներ 78 տոկոսը, միս 58 տոկոս ևայլն։

Այս մթերքները գյուղատնտեսական ծրագրում մեծ տեղ են բռնում. սակայն պետք է ասել, որ նրանց մթերման և հայթայթման գործում բանկոոպը մասնակցություն չի ունեցել և ընդունել է այն ինչ որ կարողացել են տալ մատակարարող օրգանները, իսկ վերջինները լրիվ կերպով չեն կատարել իրենց վրա վերցրած պարտավորությունները։

Գյուղմթերքների մասնակցությունը առևտրական շրջանառության մեջ ուժեղացնելու և նրանց մատակարարման գործը միանգամայն ապահովելու համար անհրաժեշտ է, որ Բանկոոպը այս ընթացիկ տարում հանդես գա գյուղատնտեսական շուկայում թե՛ որպես ինքնուրույն մթերող և թե՛ որպես արտադրողի դերում (սեփական խորանտեսության միջոցով). վերջին աշխատանքներին նա արդեն ձեռնարկել է։

Արդյունաբերական ապրանքների գնումն ու վաճառքը առանձին-առանձին քննության առնելով, մենք ունենալով պլանի գերակատարումը բոլոր խմբերի վերաբերմամբ. թերակատարում ունենք հետևյալ ապրանքների վերաբերմամբ։ Գինված է չերչիկային ապրանքներ (կատարված է պլանի 50.8 տոկոսը). այլ գաստրոնոմ. ապրանքները (51.5 տոկոսը). մանուֆակտուրայի բրդեղեն խումբ (19.7 տոկոսը), կամվոլ գործվածքներ (73.6 տոկոսը), փայտեղեն (51.6 տոկոսը), գալանտերեյնի ապրանքների (90.5 տոկոսը) և այլն։ Համապատասխան տոկոսներով ցածր է և նույն ապրանքային խմբերի վաճառքի պլանի կատարումը։

— Հետաքրքիր է Բանկոոպի շրջանառության մեջ գտնվող ապրանքների տեսակարար կշիռը-որ մենք բերում ենք հետևյալ աղյուսակում:

| №№ ըստ կարգի | ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ | 27/28 թ. %-ով | 28/29 թ. %-ով | 27/28 թ. Աբսոլյուտ թվերով | 28/29 թ. Աբսոլյուտ թվերով |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական մթերքներ | 27,2 | 32,7 | 1,744,454 | 3,228,820 |
| 2 | Նպարեղեն և Գաստրոն. (կոլոնյա) | 22,3 | 18,3 | 1,430,192 | 1,806,954 |
| 3 | Մանուֆակտուրա | 21 | 16,5 | 1,346,818 | 1,629,222 |
| 4 | Պատրաստի հագուստ | 2,3 | 4,8 | 147,508 | 473,955 |
| 5 | Գալանտերեյա | 6 | 8 | 384,805 | 789,925 |
| 6 | Կոշիկեղեն-կաշվեղեն | 7,5 | 6,7 | 481,006 | 661,562 |
| 7 | Ամանեղեն զանազան | 4,2 | 3,0 | 269,363 | 296,222 |
| 8 | Նավթամթերքներ | 3,4 | 3,1 | 218,056 | 306,096 |
| 9 | Ամուր վառելիք | 2,9 | 1,5 | 185,989 | 148,111 |
| 10 | Այլ արդյունաբերակ. ապրանք. | 3,2 | 5,4 | 205,229 | 533,200 |
| | Ընդամենը | 100% | 100% | 6,413,420 | 9,874,067 |



Այս աղյուսակում բերված թվերը ցույց են տալիս որ հաշվետու տարում գյուղմթերքների մասնակցությունը ընդհանուր շրջանառության մեջ աճել է 5,5 տոկոս. ի հաշիվ նպարեղենի, նմանապես աճել է պատրաստի հագուստեղենի և արհեստական ապրանքների (գալանտերեայի) մասնակցությունը ի հաշիվ մանուֆակտուրայի:

Իջեցումը նկատվում է կոշիկեղենի և կաշվեղենի գրուպայում, որը բացատրվում է կաշվեղենի մատակարարման կրճատումից և մասամբ էլ պակասել է ամանեղենի տոկոսը, որի հանդեպ ուժեղացել է այլ արդյունաբերական ապրանքների մասնակցությունը մեր շրջանառության մեջ:

Նույն աղյուսակը ցույց է տալիս նաև, որ հաշվետու տարում մթերային ապրանքների ընդհանուր տեսակարար կշիռը $49\frac{1}{2}$-տոկոսից բարձրացել է մինչև 51 տոկոսի: Այդ նշանակում է որ սննդամթերքների գերակշռող դերը բանվորական բյուջեյի մեջ Բանկոոպի կողմից հաշվի չի առնված և այդ ուղղությամբ էլ տարվում է նոր առևտրական քաղաքականություն:

**Բանկոոպի վերադիր ծախսերի մասին.** —Վերևի աղյուսակում գնված ապրանքի առքի գինը հավասար է 8.620,264 ռ. 23 կոպեկի. վերադիր ծախսերը են կատարված 282.005 ռ. 11 կոպ. որը կազմում է ապրանքների առքի գնի 3.27 տոկոսը: Այդ տոկոսը նախորդ տարվա համեմատությամբ (4,65 տոկոս) ցույց է տալիս 1,38 տոկոսի կրճատում:

**Բանկոոպի հավելումները ու ծախսերը.** Հաշվետու տարում համեմատած 1927—28 տնտ. տարվա

հետ բանկոոպի հավելումների ծախքերի տոկոսը բարձրացել են. տես հետևյալ աղյուսակ։

| | 1927—28 թ. | | 1928—29 թ. | |
|---|---|---|---|---|
| | Պլանով | Փաստորեն | Պլանով | Փաստորեն |
| 1. Հավելում գնված ապրանքների ինքնարժեքին . . . | 11,98 | 12,20 | 13,37 | 12,94 |
| 2. Վաճառքի ծախքերը ինքնարժեքի գումարին . . . | 10,01 | 10,84 | 12,37 | 13,24 |

Ծախքերի պլանային %-ը գերազանցվել է ցանցի լայնացման հետևանքով՝ շտատների մեծացման հետ կապված նախահաշվից դուրս կատարված ծախքերից։

**Բանկոոպի առևտրական յեվ արտադրական աշխատանքների ընդհանուր վորակի մասին.** Անհրաժեշտ է նշել, վոր բանկոոպի սպասարկման վորակը թե արտադրական ձեռնարկներում և թե առևտրական, հաշվետու տարվա ընթացքում վորոշ չափով բարձրացել է՝ ցանցի լայնացման, և խանութային աշխատանքների տեխնիկական վորոշ բարեփոխությունների միջոցով, սակայն այդ ասպարեզում դեռ շատ անելիքներ կան։ Սպասարկման գործն ավելի լավ հիմքի վրա դնելու, հերթերը վերացնելու, դեֆիցիտային ապրանքների բաշխման հետ կապված չարաշահությունների առաջն առնելու համար անհրաժեշտ է կիրառել ռացիոնալիզատորական մի շարք միջոցներ, վորոնց շուրջը պետք է ստեղծվի լայն հասարակական հետաքրքրություն և ինքնագործունեություն։



Այս բնագավառում մենք դեռ ևս չենք կատարել վճռական բեկում։

**Բանկոոպի աշխատող շտաֆի նագրուզկան.** Հաշվետու տարում աշխատակիցների միջին թիվը հավասար է յեղել 382-ի (1927—28-թվին յեղել է 207). վորից գրասենյակային ու հաշվական աշխատակիցներ 53 հոգի (անց. տարում 31)։ Այսպիսով գրասենյակային մի աշխատակցին 1927—28-ին ընկնում էր 5,7 աշխատող. իսկ 1928—29 տ.՝—6.2 աշխատող։ Այս յերևույթը դրական պետք է համարել քանի վոր մի կողմից ապացուցում է գրասենյակային աշխատանքի ռացիոնալ կազմակերպումը և ապարատի աճման դանդաղումը՝ համեմատած առևտրի մեջ աշխատող կադրերի, մյուս կողմից նորմալ գումարի չե մոտեցրել աշխատակիցների միջին նագրուզկան։ Մի աշխատակցի նագրուզկան 1927—28-ին յեղել է 4439 ր. 1928—29-ին նա հավասար է 3500-ի։ (Իսկ խանութի աշխատողների վերաբերմամբ համապատասխան թվերը յեղել են 4772 ր. և 4520 ր.)։

Բանկոոպը միջոցներ պիտի ձեռք առնի միջին նագրուզկան հասցնել նորմալ չափերի։

**Բանկոոպի ապրանքապտույտի արագությունը.—** Առևտրական աշխատանքի վորակի մի ցուցանիշն էլ այն է, թե վորքան արագությամբ է այս կամ այն ապրանքը վաճառվում Բանկոոպի խանութներում։ Այդ ցուցանիշը (ապրանքապտույտի արագությունները)—համեմատության դնելով 1927—28 տնտ. տարում համապատասխան տվյալների հետ, բերում ենք միայն մի քանի գլխավոր ապրանքների վերաբերմամբ։

| Հաշվե-կան տարում | Ապրանքների պտույտը օրերով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանու-ֆակտու-րա | Գալան-տերյա | Ամանե-ղեն | Նավթա-մթերք-ներ | Շաքար | Կոշկե-ղեն |
| 1927—28 | 21,4 | 93.5 | 83.5 | 9.6 | 30.3 | 44,2 |
| 1928—29 | 14,3 | 68,3 | 127,2 | 5,1 | 25,4 | 41,9 |

Ընդհանուր առմամբ ապրանքների պտույտի օրերի թիվը կրճատվել և Բացառությամբ ամանեղենի։ Այդ նշանակում է Բանկոոպի աւբաժինը ավելի ճկունացրել է իր գնումները և այդ իսկ պատճառով նրա ապրանքների պտույտի օրերի թիվը պակասել են։

**Արտադրական ձեռնարկների յեվ նրան կից ժողսննդի հիմնարկների գործունեյությունը առ 1/10—29 թ.**

Առ 1-ն նոյեմբերի 1929 թ. արտադրական բաժնին կից չրել են հետեվյալ ձեռնարկները, 2 հացի փուռ, 2 հրուշակարան, 1 յերշիկանոց, մի վարսավիրանոց, 3 ճաշարան մի թեյարան և վեց (կոլլեկտիվներին կից) բուֆետներ։ Այդ թվերի համեմատական տվյալները 1927—28-ի հետ բերված են վերեվում։ Հաշվետու տարում Բանկոոպի վարչությունն իր խոշոր ուշադրությունը կենտրոնացրել եր ամենահիմնական ճյուղերից մեկի՝ հացի արտադրության, նրա կենտրոնացման և սպառման վրա. այդ պատճառով, թեյեւ մեծ դժվարությամբ, բայց այնուամենայնիվ նա հնարավորություն ունեցավ հաշվետու տարվա վերջում ավարտել նոր մեքենայական հացի գործարանի կառուցումը, վորից հետո նոյեմբեր ամսի 1929 թ. կենտրոնացել է ամբողջ քաղաքի աղգաբնակչության հաց թխելու պահանջը, լավացնելով և հացի վորակը։



**Հացի արտադրությունը յեվ աշխատակիցների թիվը 2 փռերում ցվել է հետեվյալ պատկերը։**

| Գործարանի անվանումը | Արտադրություն 27/28 տնտ. տ. կիլոգրամներ | Արտադրություն 28/29 տնտ. տ. կիլոգրամներ | %% համեմատ. | Նախատեսված 29/30 | %% համեմատ. | 28/29 շահույթ. վնասը |
|---|---|---|---|---|---|---|
| № 1 ՓՈՒՌ (մեքենա) | | | | | | |
| 1. Արտադր. հացի քանակը (կիլոգրամներ.) | 3,008,900 | 3,617,500 | 120,2 | 11,100,000 | 307,0 | 659,237 —69 |
| 2. Աշխատակից. թիվը | 44 | 53 | 120,5 | 103 | 194,0 | |
| 3. Նագրուզկա | 68,384 | 68,255 | 99,8 | 107,767 | 158,0 | |
| 4. Արդյունք | 43,609 | 22,939 | 52,6 | | | |
| № 2 ՓՈՒՌ | | | | | | |
| 1. Արտադր. հացի քան. | 1,201,000 | 1,407,000 | 117,1 | — | — | 254,971 —36 |
| 2. Աշխատակիցն. թիվը | 25 | 24 | 96,0 | — | — | |
| 3. Նագրուզկա | 48,040 | 58,650 | 122,1 | — | — | |
| 4. Արդյունք | 13,544 | 60,078 | 44,9 | | | 15,727 *) —32 |

(* 15,727 ռ. 32 կոպ.ստացված է զուտ ոզուտ մասնավոր փռերից.

Ինչպես տեսնում ենք հացի արտադրության և նրա բաշխման կազմակերպման մեջ բանկոոպը ունեցել է և ունի խոշոր հաջողություններ։ Հետագա հիմնական խնդիրը վարչությունը համարում է ժողովրդական սննունդի գործի կանոնավոր կազմակերպումը և նրա վերակառուցումը։

Մինչեվ օրս աչքաթող է արված կուլտուրական թեյարանների կազմակերպման և բացման խնդիրը, բանկոոպի 2 թեյարանները վոչ մի կերպ չեն բավարարում մեր օրվա պահանջը։ Պետք է հիմնական խընդիր դարձնել ճաշարանների լայնացման հետ միասին և զուգահեռ ավելացնել նույն չափով թեյարանների բացման խնդիրը. Բանկոոպը 1929–30 թվի իր ծրագրում նախատեսել է մի քանի ճաշարանների բացում նույնպես և խոշոր թեյարաններ։ Բացի այդ մեր առաջ դրված է նույնպես հատուկ դիետական ճաշարան բաց անելու խնդիրը, հիվանդներին սպասարկելու համար։ Նշելով այս տարվա գործարանների և հիմնական ձեռնարկներին կից մոտավորապես 30 բուֆետներ բացանելու խնդիրը, անհրաժեշտ է միաժամանակ միջոցներ ձեռնարկել նույնպես սեզոնային աշխատավորությանը բավարարելու տաք նախաճաշերով, ճաշերով, առաջին հերթին կառուցող բանվորության և սովխոզներում աշխատողների համար, այդ բոլոր խնդիրները պետք է անհետաձգելի խնդիրներ համարել։

Հաշվետու տարում ժողսննդի հիմնարկ-ձեռնարկները տվել են հետեվյալ պատկերը։



| №№ ըստ կ. | Ճաշարանների անունները | 27—28 տար. | 28—29 տար. | Աճում %% | Նախատեսվում է 29—30 տար. | Նախատեսվում է Աճում %% |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՃԱՇԱՐԱՆ. 1, 2, 4· | | | | | |
| | 1. Շրջանառ. . | 451,886 | 619,474 | 137,0 | 1,055,800 | 171,0 |
| | 2. Վնաս . . . | 20,792 | 38,425 | — | — | — |
| 2. | ԹԵՅԱՐԱՆ. 1 և 2 | | | | | |
| | 1. Շրջանառ. . | 48,072 | 173,562 | 361,0 | 452,900 | 261,0 |
| | 2. Օգուտ . . . | 303 | 7,275 | 2,400,0 | — | — |
| 3. | ԲՈՒՖԵՏՆԵՐ | | | | | |
| | 1. Շրջանառ. . | — | 14,107 | — | 112,520 | 797,0 |
| | 2. Վնաս . . . | | 938 | — | — | — |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | |
| | 1. Շրջանառ. . | 499,938 | 807,143 | 62,0 | 1,621,220 | 207,0 |
| | 2. Վնաս . . . | 20,489 | 32,088 | — | — | — |

Գալով օգուտի և վնասների խնդրին պետք է ասել, վոր մեր ճաշարանները խոշոր վնասներ կրեցին։ Յեվ այդ վնասները պետք է վերագրել հետեվյալ հանգամանքներին։

1) Ճաշերի ինքնարժեքի բարձր լինելը, իսկ վաճառքի արժեքը անհամեմատ ցածր լինելուն։

2) Նարպիտ ընկ. Արտոնություններից չօգտվե-

յուն, որի հետևանքով մեր կոմմունալ ծախքերը և տուրքերը բարձր են։

3) Շենքերի անհարմարությունները, որը և առիթ է տալիս, թանգ սպասարկման պահեստներ չունենալուն, որը անշուշտ անդրադառնում է, մթերքների պահպանման և փչացման վրա։

4) Վորակավոր կադրերի պակասություն։

Ճաշերի վորակը պետք է ասել չնայած էժան գներին, թե իր քանակով և թե վորակով բավարար է, և ունի, նորմալ «կալորյականություն»։

Անմիջիթար դրություն մեջ է լեզել սպասարկումը և ձեռնարկների սանիտարական դրությունը։ Արտադրողական ձեռնարկների մեջ քիչ տեղ չէ բռնում հրուշակարանի և ցերաշիկարանի գործը։ Չնայած վոր այդ ձեռնարկների քանակը մնում է համարյա թե նույնը, բայց պետք է ասել, վոր տարեց տարի նրանց կարիքն ավելանում է և շրջանառությունը հսկայական աճում է ցույց տալիս, չնայած դրան պետք է նշել, վոր այդ ձեռնարկությունների արտադրած մթերքը միայն չնչին տոկոսով է բավարարում սպառող մասսային, լրիվ չբավականացնելու հետևանքը պետք է բացատրել նույնպես համապատասխան շենք չունենալու պատճառով, մյուս կողմից այս տարի մի քանի կարևոր մթերքների պակասության, այն է յուղի, ձվի, ճարպի և այլն. այնուամենայնիվ նորընտիր վարչությունները պետք է իրենց առաջ խնդիր դնեն. հենց 1930—31 թվից սկսել, այդ ձեռնարկությունները վերածել գործարանների։

Հաշվետու տարում հրուշակարանի և ցերչիկարանի գործունեությունը տվել է հետևյալ պատկերը։



| Գործարանի վիճակա-նիշը | 27—28 թ. | 28—29 թ. | % % աճում. | 29—30 թ. | % % հա-րաբերութ. |
|---|---|---|---|---|---|
| **1. Հրուշակարան** | | | | | |
| 1. Արտադրություն . . | 192,136 | 285,290 | 271,8 | 400,000 | 140,1 |
| 2. Աշխատավորների թիվը | 20 | 35 | 175,0 | 46 | 131,5 |
| 3. Նավթ (տոննա) . . . . | 5,106,0 | 7800,0 | 153,5 | 8700,0 | 111,5 |
| 4. Արդյունք . . . . | 20,973 | 35,355 | — | — | — |
| **2. Ցերչիկանոց** | | | | | |
| 1. Արտադրություն . . | 39,594 | 59,918 | 151,6 | 100,000 | 167,0 |
| 2. Աշխատավորների թիվը | 3 | 4 | 111,0 | 6 | 150,0 |
| 3. Նավթ (տոննա) . . . . | 13,198 | 14,000 | 106,0 | 16,600 | 118,5 |
| 4. Վնաս . . . . . . | 2,170 | 1,149 | — | — | — |

Հրուշակարանը տալիս է բավականին խոշոր ար-

դյունք. չերշլիկանոցն ունեցել է համեմատած չնչին վնաս, որի պատճառը մթերքների արժեքը բարձր լինելու հետևանքն է: Այնուամենայնիվ վարչությունը պահպանեց և նրա վաճառքի կայուն արժեքը, իբրև անդամթերքի:

Օժանդակիչ արտադրական ձեռնարկների ճյուղերից մեկը, վարսավիրանոցներն են, պետք է ասել, որ նման ձեռնարկությունների պահանջը նույնպես զգում էր բանկոոպի սպառողը, և այդ պատճառով բանկոոպը ձեռնարկել է նորից մի քանի վարսավիրանոցներ բաց անելու, նախորոք չենթարկելով վերանորոգման ունեցած վարսավերանոցը և նոր բացվածները ապահովել լրիվ սանիտարական դրությամբ, ի հաշիվ այդ ձեռնարկներից ստացված արդյունքների:

Վարսավիրանոցների վերաբերեամբ տվյալները բերված են հետևյալ աղյուսակում:

| Գործարանի անունը. | 27—28 թ. | 28—29 թ. | % % հարաբերություն. | 29—30 | % % հարաբերություն. |
|---|---|---|---|---|---|
| Վարսավիրանոց | | | | | |
| 1. Շրջանառություն. | 37.196 | 45.047 | 121.6 | 10?.000 | 140.0 |
| 2. Աշխատակ. թիվը. | 30 | 35 | 17.0 | — | — |
| 3. Նագրուզկա. | 1267 | 1287 | 2.0 | — | — |
| 4. Արդյունք. | 3313 | 4.642 | 140.0 | — | — |



## Գ. Բանկոոպի ֆինանսական դրությունը.

Բանկոոպն իր գործունեության համար չի ունեցել համապատասխան ֆինանսական բազա: Ոչ նրա սեփական միջոցները, ոչ փոխառու միջոցները նրա աշխատանքի նորմալ ընթացքը հաշվական տարվա ընթացքում չեն ապահովել և նրա հետևանքով Բանկոոպի Վարչությունը համարյա մշտապես ապրել է ֆինանսական խիստ լարում:

Այլ կերպ լինել էլ չէր կարող: Հաշվետու տարվա ֆինանսական այդ դրությունն ընդհանուր է յեղել բոլոր առևտրական կազմակերպությունների համար և պետք է, որ նա անդրադառնար նաև Բանկոոպի տարբեր աշխատանքների վրա:

Շնորհիվ ինդուստրացման քաղաքականության, կոոպերացիան պլանաչափ կերպով պետք է ազատի արկային— պետական միջոցները բացառիկ ուշադրությամբ մոբիլիզացիայի չենթարկելով ապառարկման ենթակա մասսաների դրամական միջոցները՝ փայաբաժնագլխի, ավանդների, նպատակային ավանսների և այլ միջոցներով: Միաժամանակ պետարդյունաբերություն ու այլ մատակարարող կազմակերպությունները նույնպես վատթարացնում են իրենց պայմանները սպառկոոպերացիայի հետ գործարքներ կատարելիս. և այդ բոլորի հետևանքով չունենալով անհրաժեշտ դրամական մուտքեր կոոպերացված մասսաներից— Բանկոոպի ֆինանսական լարված դրությունը անխուսափելիորեն ընդունում է խրոնիքական բնույթ:

Սակայն չնայած այդ լարվածությանը, Բանկոոպի ֆինանսական դրության ընդհանուր ցուցանիշներն ա-

պացուցում են, վոր այս բնագավառում տարվել է բավարար աշխատանք և թեև մեծ դժվարություններով, Բանկոոպը կարողացել է իր տարեկան գործունեությունը փակել առանց վնասի:

Ահա Բանկոոպի ֆինանսական գործունեության գլխավոր ցուցանիշները, վորոնք համեմատության համար բերված են 1927—28 տնտեսական տարվա ցուցանիշների հետ զուգահեռ: Բանկոոպի շրջանառությունը կլոր թվերով յեղել է 1927—28 թ. վեց և կես միլիոն ռուբլի, իսկ 1928—29 թ. ինն միլիոն ութ հարյուր յոթանասուն չորս հազար ռուբլի (9.874,000 ռուբլի):

Շրջանառության մեջ գտնվող միջոցների գումարը համապատասխան տարիներում յեղել է 1.226.800 ռուբլի և 1.871.000 ռուբլի: Այս նշանակում է, վոր Բանկոոպի տրամադրության տակ յեղած շրջանառու միջոցները (սեփական և փոխառու) նա ոգտագործել է 1927—28 տնտ. տարում 5,3 անգամ, իսկ 1928—29 թ. 5,5 անգամ (կամ 68,8 որում անցյալ տարում և 61 որում հաշվետու տարում):

Այդպիսով Բանկոոպը ունեցած դրամը այս տարի ավելի արագ է շրջանառության մեջ ոգտագործել քան անցյալ տարի: Դրա հետևանքով է, վոր նրա ապրանքի միջին պտույտի արագությունն ևս դրական ցուցանիշ ունի, մինչդեռ Բանկոոպը 1927—28 տնտ. տարում ապրանքների շրջանառության միջինը ունեցել է 8,6 անգամ (կամ 41,8 որ), 1928—29 տնտ. տարում նրա ապրանքաշրջանառության պտույտների թիվը 10,5 անգամ (կամ 33,5 որ):

Միաժամանակ յեթե, ի նկատի ունենանք, վոր



Բանկոոպն ունեցել առևտրական ու արտադրական կետերի զգալի լայնացում (ավելի քան 60%) շրջանառության աճում (50%) և այն և վոր նրա փոխառու միջոցների գումարը 1927—28 և 1928—29 տնտ. տարիների հոկտեմբերի 1-ին յեղել է 1.691.700 ռուբլի և 2.348.000 ռ. (կամ աճում 39%-ով) մեզ համար պարզ կլինի, վոր Բանկոոպի հետագա աշխատանքները կարելի կլինի տանել նորմալ պայմաններում, միայն այն դեպքում, յերբ Բանկոոպի Վարչությունը ձեռնարկի արտաքո կարգի արագ ձեռնարկումներ կոոպերացված մասսաներից դրամական միջոցներ կուտակելու ուղղությամբ: Այսպես այս բնագավառում ամեն մի դանդաղում կունենա Բանկոոպի հետագա գործունեության համար բացասական հետևանքներ: Այս բանը չպիտի մոռացության տրվի վոչ մի րոպե, մանավանդ այն պատճառով, վոր Բանկոոպի ֆինանսական այդ դրությունը մասամբ հետևանք է այն խոշոր դրամական ներդրումների, վոր Բանկոոպն արել է իր ձեռնարկների ցանցի լայնացման համար նոր շենքերի կառուցման և հին շենքերի վերանորոգման ծախքերի վրա:

Այդ կարգի ծախքեր 1929—30 տնտ. տարում Բանկոոպն ավելի պիտի անի, քանի վոր մեր շինարարության աճող տեմպը պահանջում է ավելի ևս ուժեղացնել հիմնական շինարարության ու նորոգումների համար անհրաժեշտ դրամական ներդրումները:

### Դ. Բանկոոպի հեռանկարները 1929—30 թ.

Յելնելով անցյալ նվաճումներից, հաշվառելով բացերն ու թերությունները Յերբանկոոպի Վարչու-

թյան առաջ, վորպես գործնական աշխատանք հետևյալ հիմնական խնդիրներն են դրվում՝

### Ա. Կազմակերպչական աշխատանքների բնագավառում.

1. Ուժեղացնել կոոպերացման և փայակուտակման աշխատանքները, հատկապես նպատակ դնելով կոոպերացման յենթարկել մինչև այժմ կոոպերացիայի շարքերից դուրս մնացած աշխատավորների ընտանիքների անդամներին և անցնել փայագանձման նոր մեթոդի, բանվորածառայողների ամսական աշխատավարձին հասցնելով փայավճարի գանձվելիք գումարը:

2. Զարկ տալ հասարակական—մասսայական աշխատանքներին՝ անցնելով նրանց ծրագրային կիրառմանը՝ բոլոր բնագավառներում: Հատկապես ուժեղացնել աշխատանքը կոոպերատիվ ակտիվի մեջ. վերջինիս կապելով Բանկոոպի գործնական աշխատանքների հետ:

3. Մասսաների ու կոոպերատիվ ակտիվի կապը Բանկոոպի հետ ուժեղացնելու նպատակով, ավելի ուժեղ աշխատանք տանել հիմնարկ—ձեռնարկների կոոպերատիվ խմբակների ու կոոպ լիազորների հետ: Կանոնավորել կոոպերատիվ անկյուններում տարվող աշխատանքները և յուրաքանչյուր մեծ գործար—տեղկոմին կից ստեղծել Բանկոոպի խնական ակտիվ:

Կիրառել առանձին բանվորական կոլեկտիվների շեֆությունը Բանկոոպի խանութների և ձեռնարկների վրա:

4. Ուժեղացնել լիազորական ժողովների ղեկավարությունը Բանկոոպի առորյա աշխատանքներին,



մասնակից անելով լիազորների կամավոր հիմունքներով աշխատող սեկցիաներին: Բացի կազմակերպչական, առևտրական, արտադրական սեկցիաներից, այս տարի ստեղծել նաև ֆինանսական—տնտեսական ու բժվիգին սեկցիաներ:

5. Կադրերի պատրաստման ու վերապատրաստման խնդիրներին հատուկ ուշք դարձնել:

6. Վերակազմել փայավճարային սեկտորը, կատարել ընդհանուր վերացուցակագրում և կանոնավորել մթերային գրքույկների գործը:

7, Հատուկ ուշք դարձնել խանութային տեխնիկայի ռացիոնալացման վրա՝ ստեղծելով կայուն ապարատ և անհրաժեշտ հասարակայնություն:

8. Վորպես գործնական աշխատանք Բանկոոպի առանձին ձեռնարկներում և առևտրական կետերում ամենալայն չափերով կիրառել հարվածայնությունը և սոց մրցումը՝ ստեղծելով այդ խնդիրների շուրջը արհմիութենական ու կոոպերատիվ անհրաժեշտ գործակցություն և ղեկավարելով այն:

### Բ. Առևտրական աշխատանքների բնագավառում.

9. Լայնացնել Բանկոոպի ցանցը Յերևան քաղաքի շինարարությունից ելնող անհրաժեշտության չափերով, այլ և քաղաքի աշխատավորության հետզհետե աճող գնողունակության տեմպերի համեմատ: Հատուկ ուշք դարձնել քաղաքի ծայրերում և հիմնարկ—ձեռնարկների մոտ մթերային խանութների, լառյոկների, կրպակների առևտրի զարգացմանը:

10. Հատուկ ծրագիր մշակել և Բանկոոպի ան-

դամներին լայն ինֆորմացիա տալ առևտրական պլանի մանրամասնությունների և ապրանքային շուկայի դրության մասին կոնկրետ միջոցառումներով՝ ապահովելով սպառողներին ապրանք մատակարարելու գործը։

11. Կանոնավորել դեֆիցիտային ապրանքների բաշխման գործը։

12. Վերանայել և լրացնել Բանկոոպի ասորտիմենտը՝ հարմարեցնելով այն մեր կենցաղային նոր պայմաններին—գրքի վաճառքի, պատրաստի շորերի վաճառքի ուժեղացում, ռադիո- լուսանկարչական իրերի, էլեկտրական և կահավորումավաճառք և այլն։

13. Ուսումնասիրել առևտրական աշխատանքների մեջ տնտեսումի ու կորուստների խնդիրները հատկապես պահեստային ու խանութային աշխատակիցներին այս բնագավառում ցույց տալով տեխնիքական ղեկավարություն։

Հաշվառել աշխատակիցների գյուտարարության ու ռացիոնալ առաջարկությունների բոլոր դեպքերը՝ ստեղծելով հետաքրքրություն և պարգևատրելով այդ բնագավառում առանձնապես ակտիվ աշխատակիցներին, ուժեղացնել ռացիոնալիզատորական աշխատանքը։

## Գ. Արտադրական ձեռնարկների բնագավառում.

14. Մշակել արտադրական և ժող-սննդի ձեռնարկների լայնացման ծրագիր։

15. Բոլոր միջոցներով վերանայել ու կրճատել արտադրական ու ժողսննդային ձեռնարկների ապարա-



տի թերությունները, կենսագործել ռացիոնալ—մինիմում ձեռնարկումների ծրագիրը, ուշք դարձնել սանիտարային, և ճաշարանների սարքավորման ու այդ հարմարություններին։

16. Շեշտելով մերձքաղաքային գյուղատնտ. ձեռնարկ (թռչնաբուծության բանջարանոցի և կաթնատնտեսություններ) կազմակերպելու գործում Բանկոոպերացիայի փորձի առաջին տարին և դժվարությունները, նպատակ դնել չեղած ֆինանսական հնարավորությունների սահմաններում այդ տնտեսությունները դնել ռացիոնալ հիմունքների վրա՝ նրանց օգտավետությունն ու մաքսիմում արտադրությունն ապահովելու։

## Դ. Ֆինանսական—տնտեսավարական գործունեության բնագավառում.

17. Կազմակերպել ավանդների ու ավանսների ընդունելության գործը՝ ապակենտրոնացնելով այն մինչև—հիմնարկ—ձեռնարկ—գործարաններում ստեղծվելիք կոոպերատիվը, վերջինիս աշխատանքների մեջ ավանդային ու ավանսների գործառքների կատարումը։

18. Վերանայել Բանկոոպի բալանսը, գույքացուցակը, պահեստները, խանութները և այլն և տնտեսության բոլոր բնագավառներում ունեցած մեր այլ միջոցները, իրացնել և դնել օգտակար շրջանառության մեջ։ Հատուկ հասարակայնություն ստեղծել տարայի և փաթեթանյութերի, մնացորդների օգտագործման խնայողության շուրջը՝ տնտեսական ու արտադրական խորհրդակցությունների մեջ կոնկրետացնելով այդ աշխատանքները։

19. Վերակազմել և ուժեղացնել սեփական ավտոտրանսպորտը, վերջինիս ռացիոնալ օգտագործման միջոցով եժանացնելով վերադիր ու փոխադրական ծախքերը։

## ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԿԵՆՏ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ „ԼԵՆԲԱՆԿՈՈՊ"-Ի 1928—29 ՏՆՏ. Տ. ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Լենբանկոոպի գործունեյությունը հաշվական տարվա ընթացքում ընթացել և արդյունաբերական վորոշ ապրանքների դեֆիցիտի և ֆինանսական մի շարք դժվարությունների պայմաններում։ Սակայն, չնայած դրան, մի տարվա գործունեյության ցուցանիշները տալիս են Լենբանկոոպի կազմակերպչական ու տնտեսական աշխատանքների բոլոր բնագավառների վերաբերմամբ նվաճումների ու աճման անվիճելի թվեր։ Ստորև բերում ենք այդ գործունեության հիմնական տվյալները՝ համեմատության դնելով 1927—28 տ. համապատասխան տվյալների հետ։

### Անդամների թիվը յեվ փայավճարների կապիտալը

Կոոպերացման աշխատանքի ու փայադրամագըլխի աճման բնագավառում Լենբանկոոպի մի տարվա աշխատանքների հետևանքը բերված է «ա» աղյուսակում։



Աղյուսակ «Ա».

| Անդամների թիվը. | | | Փայադրամագլուխը | | |
|---|---|---|---|---|---|
| X. 1. 1928 | X. 1 1929 | Աճումը % % | X. 1. 1928 | X. 1. 19 9 | Աճումը % |
| 4821 | 7616 | 58.9 | 40710. 24 | 92249. 07 | 126. 6 |

Ինչպես տեսնում ենք այս բնագավառում բանկոոպի աշխատանքը տվել է դրական հետևանքներ։ Միջին փայավճարի գումարը մի տարվա ընթացքում բարձրացել է 8 ր. 44 կոպեկից մինչև 12 ր. 07 կոպ.։ Ըստ մոտավոր տվյալների Լենբանկոոպն ընդգրկել է արհմիության անդամների 80 տոկոսը։

Բավարար չեն ընտանիքի **յերկրորդ անդամների** կոոպերացման աշխատանքները. պատճառն այն է, վոր մենք վոչ մի գործնական միջոցի չենք դիմել նրանց նյութական շահագրգռման կամ այլ արտոնությունների միջոցով կոոպերացիայի շահերը գրավել։

Բանկոոպի անդամների թվի վերը բերված աճումն առաջացրել է բանկոոպին հատուկ ուշք դարձնել կուլտուր կրթական ու կենցաղային մասսայական աշխատանքներին։ Այս բնագավառում բանկոոպի նըվաճումները անցյալի համեմատությամբ ցույց են տալիս զգալի բեկում։ Մի կողմից մենք ունենք քանակական նվաճումներ, իսկ մյուս կողմից աշխատանքի վորակի համեմատական լավացում։ Թվական տվյալները 1928—29 թ. վերաբերմամբ հետևյալներն են։

**ա) Կատարված են ագիտ—պրոպ մասսայական աշխատանքներ—հետեվյալ ցուցակով.**

Կազմակերպված են 6 կոոպ. անկյուններ.
» 8 կոոպ. խմբակներ.
» 6 անգրագետ. վերացման խմբակներ.
Անց է կացված կոոպվիճակախաղ և կոոպ.—կամպանյաներ.
» կոոպերատիվ կուրսեր.
» զեկուցումներ ու մասսայական ժողովներ՝ 33 անգամ.

բ. **Բանկոոպը պահել է** 4 կոոպերատիվ անկյուններում կոոպգրադարաններ.

գ. « » 2 մանկապարտեզ 125 սաներով։

Մի այդպիսի խոշոր աշխատանք Լենբանկոոպից պահանջել է դրամական զգալի ծախքեր։ Նախահաշվով յենթադրվել եր կատարել 19339 ր. 51 կ. ծախք. Բայց փաստորեն ծախսվել է 20400 ր. 04 կ. » Ուրիշ խոսքով Լենբանկոոպն ունեցել 1060 ր. 63 կ. գերածախս,

Աշխատանքի այս բնագավառում Լենբանկոոպը պետք է ավելի ծավալի յուր ձեռնարկումները։ Արդեն 1929—30-ին լայնացվելու յեն մանկապարտեզներն ու մանկական հրապարակների տարածությունը. բացված են կանանց կոնսուլտացիա և յենթադրվում է նաև 25 մահճակալով մանկական մսուր բանալ։ Այս աշխատանքները պահանջում են թե կազմակերպչական ուժեղ զեկավարություն և թե դրամական մեծ ծախքեր։ Յեվ պետք է ասել, վոր թե մեկի և թե մյուսի հոգսը բացառապես ընկած է բանկոոպի վարչության վրա։ Տեղական կազմակերպությունները շոշափելի օգնություն այս խնդիրներում բանկոոպին ցույց չեն տալիս։



## Լենբանկոոպի աշխատող ապարատը

Նախ քան Լենբանկոոպի տնտեսական գործունեության տվյալներին անցնելը, կարեվոր է համառոտ բերել թվական տվյալներ, վորոնք բնորոշում են Լենբանկոոպի աշխատող ապարատի կազմը 1927—28 և 1928—29 տնտ. տարիների վերաբերմամբ։ (Տվյալները տե. 1 հավելվածում).

ա) Առևտրական ու գրասենյակային աշխատողների թիվը 1827—28-ին յեղել է 85 հոգի. (վորից խանութային ցանցում աշխատում եյին՝ 74 հոգի)

բ) 1928—29 տնտ։ տարում այդ թիվը համապատասխանորեն բարձրացել է 173-ի, (վորից խանութներում աշխատում են 148 հոգի)։

գ) Բացի այդ Լենբանկոոպի մանկապարտեզներում աշխատում են 20 հոգի. ժող-սննդի ձեռնարկներում 60 հոգի. փռերում 50 հոգի և վարսավիրանոցում 21 հոգ։ Այսպիսով բանկոոպի վողջ ապարատում աշխատում են 324 հոգի։

Ընտրովի մարմինների մեջ աշխատում են 11 հոգի վարչության անդամներ (վորոնցից 8-ը հասարակական—ձրի աշխատանք են տանում և միայն 3-ն են Լենբանկոոպի շտատների մեջ մտնում). 5 հոգի վեր-

ստուգիչ Հանձնաժողովի անդամներ. 153 հոգի խանութային Հանձնաժողովներում և 110 հոգի լիազորներ։ Վերջին երեք ընտրական մարմինների բոլոր անդամները կատարում են իրենց պարտականությունները հասարակական ինքնագործունեության հիմունքներով։

Տեսնենք թե ինչ աշխատանք է տարել Լենբանկոոպը 1928—29 տնտ. տարվա ընթացքում։

**Լենբանկոոպի առևտրական գործունեությունը.**

Բանկոոպի վաճառքի շրջանառությունը եղել է
1927—28 տնտ. տարում 3.142.824 ր. 25 կ.
1928—29 « » 4.366.241 ր. 55 կ.

Այսպիսով հաշվական տարվա շրջանառությունն աճել է անցյալի համեմատությամբ 38,8 %-ով. Պետք է այստեղ ընդգծել, որ չնայած շրջանառության այդ աճմանը՝ Լենբանկոոպը չի կարողացել մասնավորների առևտրի կրճատման հավասար ընդգրկել շուկան և ավելացնել իր առևտրական շրջանառությունները։ Այս բնագավառում նա դեռ ևս շատ անելիքներ ունի։

Լեն-բանկոոպի այդ շրջանառության մեջ ապրանքային հիմնական խմբերի տեսակարար կշիռը հետևյալն է եղել (ըստ գնումների տախտակի)։

| | 1928—28. | 1928—29. |
|---|---|---|
| Մանուֆակտուրա (բոլոր տես.) և տրիկոտաժ. | 27.4 % | 22.5 % |
| Կաշվեղեն (առանց կոշիկեղենի) | 9.3 » | (կոշկեղենով) 9.6 » |
| Ամանեղեն | 2.1 » | 4.6 » |



| | | |
|---|---|---|
| Շաքար և շաքարավազ | 7.8 » | 9.8 » |
| Կաթնամթերքներ | 4.6 » | 3.2 » |
| Միս | 5.8 » | 5.3 » |
| Բրինձ | 1.4 » | 0.7 » |
| Հաց և ալյուր | 17.2 » | 20.7 » |
| Նավթամթերքներ | 3.1 » | 3.2 » |
| Փայտ | 1.6 » | 2.9 » |
| Խմիչքներ | 2.3 » | 2.3 » |
| Այլ և այլ խմբեր | 17.4 » | 15.2 » |
| Ընդամենը | 100 % | 100 |

Այդ համեմատությունն ապացուցում է այն դըժվարությունները, որ ապրել է Լենբանկոոպը հաշվական տարվա ընթացքում։ Իջել է շրջանառության մեջ մանուֆակտուրայի, կաթնամթերքների, մսի, բրնձի տեսակարար կշիռը։ Ընդհակառակը բարձրացել է ամանեղենի, շաքարի և շաքարավազի, հացի շրջանառության տեսակարար կշիռը։ Այդ դրությունն ընդհանուր է եղել սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմայի համար և Լենբանկոոպը չէր կարող բացառություն կազմել։ Ընդհակառակը գյուղատնտեսական մթերքների մատակարարումն ընդհանուր առմամբ բավարար է եղել եթե ի նկատի առնենք այդ ապրանքների պակասը։

Լեն բանկոոպի վերադիր և հավելումների մասին բերում ենք հետևյալ աղյուսակը.

| Տնտ. տարի | | Վերադիր ծախքեր. | | Առևտրակ. ծախքեր. | |
|---|---|---|---|---|---|
| | Գնված և ապրանք | Վերադիր ծախքեր | %-ը [illegible] | Հավելում և արված | %-ը [illegible] |
| 1927—28 | 2975531ր.84կ. | 101920ր 31կ | 3.43 | 346275·27 | 11.2 |
| 1928—29 | 3896063ր. 17կ | 128157 69 | 3 30 | 556286—02 | 13·8 |

Հավելումների տոկոսի բարձրանալը պետք է բացատրել Լենբանկոոպի ասորտիմենտի մեջ կատարած փոփոխությամբ

Առևտրական ծախքերի գումարը կազմում է 1928—28 տարում 258639 ր. 87 կ. կամ վաճառքի գումարի 8.29 %. 1928—29 տարում 466663 ր. 62 կ. կամ վաճառքի գումարի 10.7 %։

Ծախսերի աճումը հաշվետու տարում բացատրվում է Լենբանկոոպի ցանցի լայնացման, որի հետևանքով նա ունեցել է մի շարք նոր առևտրական կետեր առանց համապատասխան մեծ նագրուզկայի։

Ցանցի լայնացումը բերված է հետևյալ թվական տվյալների մեջ.

ա) **Մասնագիտականացված առևտրական խանութներ** (բակալեա, հացի, կոնդիտերյան, մանուֆակտուրային, կոշիկեղեն, ամանեղեն, կահույք այլ և այլ ոչ մթերային խանութներ), տարվա սկզբին 15 կետ. տարվա վերջին 40 կետ.

բ) Խառն տիպի խանութները տարվա սկզբին 13 կետ. վերջին՝—16 կետ.

գ) Պահեստ.—1 կետ։

Այսպիսով Լեն բանկոոպի առևտրական կետերի ընդհանուր թիվը հավասար է 1927—28-ի վերջում 29-ի, 1928—29-ի հոկտեմբերի 1-ին 57-ի։ Աճումը հասնում է համարյա 100 %-ի։

Լենբանկոոպի ցանցի ընդհանուր գրությունը դեռ ևս նորմալացված չէ։ Կարելի չէ չենթադրել, որ այդ ցանցը պիտի հավասար բաշխել քաղաքի բոլոր մասերում՝ մինչդեռ այժմ առևտրական կետերի մեծ



մասը կենտրոնացրած են քաղաքի կենտրոնական շուկայում և նրա մոտիկ շրջակայքում։

**Արտադրական գործունեյությունը**

ա) Փուռը.

Հաշվետու տարում Լենբանկոոպի փուռում աշխատել են 50 հոգի, որից 47 բանվոր, 3 ծառայող։ Աշխատանքը տարվել է յերկու հերթով։

Ընդամենը սեփական փուռից Լենբանկոոպը արտադրել է 2.109.406 կլգ. հաց, մինչդեռ Լենբանկոոպը պիտի արտադրեր 1.669.189 կլգ.։ Աշխատողների արտադրողականությունն այսպիսով յեղել է նորմայից շատ բարձր։

Փուռի գործունեյության պատկերը պարզ կլինի յեթե մենք ծանոթանանք նաև այս թվերի հետ։ (Արտադրական կալկուլացիան)

1 ցենտներ (100 կլգ.)—հումույթի ինքնարժեքը=է 18 ր. 71 կոպ.
1 » վերամշակման ընդհանուր ծախք, = է 4 ր. 23 կ.
1 » թխված հացի ինքնարժեքը 22ր. 94կ.
1 » բաց է թողնվում վաճառքի համար 24 ր. 24 կ.

կամ 100 կլգ. հացի վաճառքից ոգուտ 8—1ր. 30կ.

Այդ ոգուտը միայն արտադրական բաժնի ոգուտն է։ Առևտրական բաժինը 7 % իր վաճառքի գնից զեղչ է ստանում հացի ռեալիզացիայի հետ կապված ծախքերը ծածկելու համար։

Փռերի շրջանառությունը հավասար ե 511.425 ր. 59 կ. Սեփական փռերի ոգտագործումից Լենրանկոոպըն ստացել ե 27.898 ր. 77 կոպ. (կամ 5.8 %)։

Բացի այդ Լենրանկոոպն իր առևտրական ապարատի միջոցով ռեալիզացիայի յե յենթարկել նաև արտելային (վարկային) ընկերության հացը, վորի ընդհանուր շրջանառությունը հավասար ե 336.149 ր. 50 կ. լոկ ոգուտը 22.949 ր. 43 կ. (կամ 7,3 %)։

Այսպիսով արտադրական գործունեության այս բնագավառում Լենրանկոոպն ունեցել ե 50.000 ր. ավելի զուտ ոգուտ։

в) Հրուշակարանը. (յերկու ամսվա տվյալներ).

1928—29 տնտ. տարում հրուշակարան—կաֆեն աշխատել ե մինչև ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին։ Աշխատակիցների ընդհանուր թիվը յեղել ե 21 հոգի. (10 հրուշակարան—արհեստանոցում. 11-ը կաֆեյում)։

Այդ ժամանակում հրուշակարանն արել ե 32.258 ր. 01 կ. շրջանառություն, վորի 9.705 ր. 53 կ. ոգուտ, վորը կազմում ե շատ բարձր տոկոս (43 %)։ Հրուշակարանի արտադրանքը ռեալիզացիայի յե յենթարկվել առևտրական բաժնի միջոցով՝ վերջինս վաճառքի գնից 25 % զեղչով։

Կարելի յե ասել, վոր արտադրության այսպիսի բարձր ոգտավետությունը չի բղխում մեր քաղաքականությունից։ Անհրաժեշտ ե այս սխալ քաղաքականությունը հետագայում ուղղել։ Լենրանկոոպի հրուշակարանը պետք ե իր աշխատանքների հետևանքում ունենա ոգուտ. բայց վոչ այդպիսի բարձր տոկոսների հասնող ոգուտ։



—— ——

## Գ, ԺՈՂՍՆՆԴԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Լենրանկոոպը հաշվետու տարում ունեցել ե չորս ճաշարան. վորոնց աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել ե 70 հոգի, (այդ թվում խոհարարներ և նրանց ոգնականները 16 հոգի, խոհանոցի այլ աշխատողներ 19, մատուցողներ և այլն-35)։ Այդ 70 հոգին տարվա ընթացքում աշխատել են 21070 բանվորական որ։ Բաց թողնված ճաշերի ընդհանուր թիվը կազմում ե մոտ 370.000.-և բացի այդ 45000 առանձին «պորցիոնների»—(յերեկոյան) ժամերին, այդքան ճաշերից ստացված ե դրամական մուտք 268.541ռ.89 կոպ.

Ճաշարանների աշխատանքի հետևանքում Լենրանկոոպն ստացել ե 27580 ռ.06 կ. վնաս, վորպիսին բացատրվում ե ճաշարանների եժան գների, բարձր ծախսերի վորոշ անտնտեսավարության հաշվառման բացերի ու այլ ընդհանուր պայմաններով։

Անհրաժեշտ ե նշել Լենրանկոոպի ճաշարանային ցանցը չի բավարարում քաղաքի աճող պահանջներին։ Չխոսելով սեզոնային բանվորների, քաղաքի բանվոր-ծառայողների մասին, պետք ե ընդգծել, վոր Լենտեկստիլի նման գործարանային շրջանում ժողսննդի գործի լավ դրվածքից շատ բան ե կախված։ Ներկայումս այնտեղ աշխատում ե մի շատ անհարմար ճաշարան, վորպիսին բաց ե թողնում իր ունակության նորմայից $2^{1}/_{2}$-3 անգամ ավելի քանակությամբ ճաշեր, պարզ ե վոր այդպիսի պայմաններում աշխատող ճաշարանը չի կարող բավարար վորակի սպասարկում իրականացնել։ Յեվ շատ տեղին են այն բոլոր բողոքները, վոր Լենրանկոոպի ճաշարանների դեմ լսվում

են աշխատավոր մասսաների կողմից։ Հասունացած է Լենբանկոոպի ճաշարանի-(գործարան-խոհանոցի) կառուցումը, որը կապահովի գոյություն ունեցող կարիքի գոնե 50-60%։ Այդ ճաշարանի կառուցումն սկսվելու է այս շինարարական սեզոնի ընթացքում։ Միաժամանակ կառուցվելու են բանջարեղենների պահեստ, որպեսզի թե բանկոոպի փայատերերը և թե ճաշարանները ապահոված լինեն բանջարեղենների պաշարով ձմեռվա ու գարնան ընթացքում։

Ժողսննդի ձեռնարկների լայնացումը ևս հերթական խնդիր պիտի համարել Լենբանկոոպի համար։ Հատկապես հիմնարկային բուֆետների կազմակերպումը, կառուցող շրջաններին սնունդ մատակարարելու գործը, դպրոցական ու նախադպրոցական մանուկների սնունդը, գյուղական ճաշարանի բացումը այլ ևս հետաձգելու խնդիրներ չեն և Լենբանկոոպը պիտի անցնի գործնական աշխատանքի՝ ելնելով իր ձեռքի տակ եղած բոլոր հնարավորություններից։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆ

Յերկրի ինդուստրացման անհրաժեշտությունը բանվորական կոոպերացիայից պահանջում է, որ վերջինս յուր շրջանառությունից դուրս հանի պետական փոխառու միջոցներ, հատկացնելով այն մեր տնտեսության այլ կարևոր ճյուղերի զարգացմանը։ Այստեղից արդեն պարզ է, որ բանկոոպը յուր տնտեսության ֆինանսավորման անհրաժեշտ աղբյուրները պետք է որոնի յուր սեփական միջոցների և ներքին հնարավորությունների մեջ։ Ճիշտ է, Լենբանկոոպին մեկ



տարվա ընթացքում հաջողվել է յուր փայադրամագլուխը 52000 ռ. ավելացնել, սակայն նոր պահեստների, խանութների, ճաշարանների կառուցումը, սեփական բանջարաբուծական, կաթնաբուծական տնտեսությունները պահանջում են խոշոր միջոցներ, որը Լենինականի բանկոոպը չունի։ Յեթե համեմատենք Լենբանկոոպի 1927/28 և 1928/29 տ. տար՝ հաշվեկշիռները, կտեսնենք, որ 1928/29 տ. տարում բանկոոպի փոխառու միջոցներն ավելացել են 14 տոկով, սեփական միջոցները շրջանառության մեջ պակասել են 62, տոկով, իսկ ոգուտը 9000 ռ. ավելացել է։

Ճիշտ է, Լենբանկոոպին հաջողվել է ապահովել յուր մինիմալ կուտակումները, բայց փոխառու միջոցների ավելացումը և սեփական միջոցների գումարի իջեցումը շրջանառության մեջ, ցույց են տալիս, որ Լենբանկոոպի տնտեսական ընդհանուր նվաճումների հետ համնթաց, շրջանառու կապիտալի դեֆիցիտ է առաջանում։ Լենբանկոոպի ֆինանսական բազան ուժեղացնելու համար անհրաժեշտ է պրոֆեսիոնալ մարմինների հետ միասին լայն բացատրական աշխատանքներ տանել դիֆփայի լրիվ գանձման ուղղությամբ, դիֆփայի մեկ ամսվա աշխատավարձի նորմաներ սահմանել, կանոնավորել ապրանքների դիմաց կանխույթներ ընդունելու գործը, ուժեղացնել ավանդների ներ-գրավումը, ընտանիքի յերկրորդ և յերրորդ անդամների կոոպերացումը և այլն։ Սեփական միջոցների ուժեղացումը հնարավորություն կտա բարելավել բանվորական պարենավորման բազան, կլայնացնի անդամթերքների կետերը, կընդգրկի բանվորի բյու-

ջին և կբարձրացնի բանվոր-ծառայողների իրական աշխատավարձը։

Բնութագրելով Լենբանկոոպի գործունեության ընդհանուր արդյունքները, պետք է շեշտել, վոր նրա հասարակայնության մեջ հատկապես խանութային հանձնաժողովների գործունեությունը հետզհետե ձևակերպվում է, վորպես շատ դրական յերևույթ։

Դեֆիցիտային ապրանքների բաշխման խանութների հերթերի կանոնավորման ու գների քաղաքականության վրա հսկողությունն այս հաշվական տարում յեղել է ավելի բավարար։ Ընդհակառակը թույլ է աշխատել վերստուգիչ հանձնաժողովը։ Անհրաժեշտ է հասարակական ակտիվի ղեկավարությունն էլ ավելի ուժեղացնել, նրան կապելով Լենբանկոոպի գործնական աշխատանքների հետ։

Դառնալով առևտրական տեխնիկական աշխատանքի վորակին, պետք է ասել, վոր այս բնագավառում Լենբանկոոպն իր բուխհալտերական մինիմում անելիքներին շատ դանդաղությամբ է ձեռնարկել։ Այստեղ մեծ անելիքներ ունեին թե Լենբանկոոպի սեփական ապարատը և կոոպերատիվ ակտիվը, վորին սակայն մինչև այժմ չեն լծել այդ աշխատանքներին։

Ապարատի աշխատանքների մեջ պակասորդներն ու զեղծումները դեռ չեն կրճատվել։ Այնպայման Լենբանկոոպի ապարատի զտման ժամանակ այս խնդիրը հիմնական լուսաբանման պիտի յենթարկվի և հասարակական միջոցառումներով նրա դեմ պիտի մղվի պայքարի կոնկրետ ձևեր։

---



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՋ

1. Բանվորական կոոպերացիայի հաշվետու կամպանիայի հիմնական խնդիրները . 3
2. Լիազորների ընտրական նորման ըստ Բանկոոպների . . . . . . . . . . . . . 14
3. Բանկոոպերացիայի 1929—30 տ. տարվա լիազորական ժողովների որակարգի հարցերը . . . . . . . . . . . . . . . . 14
4. Բանկոոպերացիայի 1929—30 տնտ. տարվա հաշ. վերընտր. կամպանիայի որացուցային պլանը . . . . . . 15
5. Հրահանգ 1928—29 տ. տարվա ոգուտների բաշխման մասին . . . . . . . 16
6. Հայաստանի Բանկոոպերացիայի 1927-28 և 1928-29 տնտ. տարվա աշխատանքների հիմնական ցուցանիշները . . . . 17
7. Յերևանի Բանկոոպի 1928—29 տ. տարվա ընդհ. բնութագիրը . . . . . . 20
8. Լենինականի Բանկոոպի 1928—29 տ. տարվա ամփոփ գործունեությունը . . 48

---

<< Ազգային գրադարան >>
NL01932301

334(47.925
2-24